



192









1827-1828 1740-1741
ՄԻՐՋԱ-ՖԱԹԱԼԻ ԱՆՈՒՆԴ-ՋԱՂԵ

ՀԱՋԻ ԿԱՐԱ


(ԱԳԱՅ ՍԱՌԴՈՒ ԱՐԿԱԾՆԵՐԸ)



ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ 5 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

ԹԱՐԿԱՆ. ՅԵ. ՍԱՐԿԻՐՈՍՅԱՆ

ՊԵՏԶՈՒՏ 1929 ՅԵՐԵՎԱՆ



ՀԱՋԻ-ԿԱՐԱ

(Ազան մարդու արկածները)

A $\frac{II}{38402}$

ԿՆՏԱԿԵՐԴՈՒԹՅՈՒՆ 5 ԴՈՐՃՈՂՈՒԹՅԱՐԲ

Թարգմ. ՅԵ. ՄԱՐՅԻՐՈՍՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ-1929

Հրատ. № 1116

ՊԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրանցով. № 2822 (բ.)

Պատվ. 1164

Տիբ. 2500

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Հիշար-բեկ

Պսկեր-բեկ

Մաճար-բեկ

Սոնա-խանում—Հիշար-բեկի նշանածը

Պեյրա-խանում—Սոնա-խանումի մայրը

Հաջի-Կարա—սովդաքյար

Թուֆեզ—նրա կինը

Բազալ—նրա վոքդին

Քյարամալի—նրա ծառան

Խուզավերզի—մուկդին

Ռեաճ—պահակների յուզբաշի

Սարգիս, Ղահրաման, Կարապետ և այլ վեց պահակ:

Մկրտիչ յեվ Պռաֆեյ—թողեցի չերկրադործներ

Մուրոյ*)

Գավառապետ

Խալիլ—յուզբաշի մուրոյի ժոռ

Մուրոյի և գավառապետի ծառայողներ

Յասաուլ

*) Մուրոյ—ուսուեր. участковый заседатель, հայերեն դրա համապատասխանը
բառն է—մովրով:

REPORT OF THE

COMMISSIONER OF THE

LAND OFFICE

FOR THE YEAR 1884

ALBANY, N. Y.:
J. B. LIPPINCOTT & CO.,
PRINTERS, 1885.

THE LAND OFFICE

OF THE STATE OF NEW YORK

REPORT OF THE

COMMISSIONER OF THE

LAND OFFICE

FOR THE YEAR 1884

ALBANY, N. Y.:
J. B. LIPPINCOTT & CO.,
PRINTERS, 1885.

THE LAND OFFICE

OF THE STATE OF NEW YORK

REPORT OF THE

COMMISSIONER OF THE

LAND OFFICE

FOR THE YEAR 1884

ALBANY, N. Y.:
J. B. LIPPINCOTT & CO.,
PRINTERS, 1885.

THE LAND OFFICE

OF THE STATE OF NEW YORK

REPORT OF THE

COMMISSIONER OF THE

LAND OFFICE

FOR THE YEAR 1884

ALBANY, N. Y.:
J. B. LIPPINCOTT & CO.,
PRINTERS, 1885.

THE LAND OFFICE

OF THE STATE OF NEW YORK

REPORT OF THE

COMMISSIONER OF THE

ԳՈՐԺՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Առաջին մեղքիս տեղի յե ունենում մի պարզ գիշեր, մի մեծ կաղնու տակ, Հեյդար-բեկի որպից քիչ հեռու. Սաֆար-բեկը հագնւած ու զինված՝ նստած ե քարի վրա Հեյդար-բեկի դեմուդեմ. Հեյդար-բեկը նույնպէս հագնւած՝ խոսում ե թախծով:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Արարիչ աստված, ես Բնշ ժամանակ ե, վոչ ձի քշելն ե բանի տեղ անց կենում, վոչ ել հրացան գցելը: Դե արի, գիշեր-ցերեկ կնկա նման բանտարկված մնա վրանումդ: Ել հարըստությունը վթրտեղից լինի, փող վթրտեղից ճարվի: Ախ, հե՛յ գիտի անցած որեր, ամեն շաբաթ, ամեն ամիս կարելի չե քաւվան կտրել, մի ամբողջ բանակ ջարդուփշուր անել: Հիմա վոչ ես կարելի չե, վոչ եմ. վոչ Ղլլբաշի, վոչ ել Ոսմանլի կռիվ կա: Ուղենաս ել դորքի մեջ մտնել, միմիայն քյասիբ լեզգիների վրա պիտի դնաս, ու յեթե հաջողվի հաղար ու մի նեղություններով նրանցից մեկին դուրս քաշել սարերի վորջերից՝ բացի մի մաշված յափնջուց՝ ձեռքդ վոչինչ չի ընկնի: Ո՛ւր մնաց Ղլլբաշի և Ոսմանլի կռիվը, վոր ամբողջ Ղարաբաղը վոսկով ու արծաթով զարդարեց: Ասլանդուղի թալանից դեսը մինչև հիմա դեռ շատ տուն շեն ե մնացել: Ամիր-Ասլան-բեկի ժառանգները դեռ չերեկ Աղջաբեղու բաղարում ծախում եյին իրանց հոր Ոսմանլի յերկրում թալանած արծաթի ձիասարքը:

Ա՛յ, մի եղպիսի կռիվ լիներ, մի զորամասի գլուխ անցնելի, ենպիսի քաջություն ցուլց կտալի, վորի նմանը ինքը—Ռուստամ-Դեստանը չի գործել: Ե՛դ ե իմ գործը և վոչ թե են, վոր նաչալնիկն ե ինձ հրամայում. «Հանդիստ կաց, ալաղտկություն մի անի, ճանապարհ մի կտրի, գողության մի դնա»: Փողմանել եմ, վոր ասացի, թե՛ «եդ գործին մենք ել սրտով կպած չենք: Բաց պետք ե, վոր դուք մեզ պես ազնիվ մարդկանց մի հացի ճանապարհ ցուլց տաք»: Մի ականջ դիր, տես, թե ինչ պատասխան տվեց. «Հեյդար-բեկ,—ասում ե,—վարուցանք ա-

բա, բաղդ մշակիր, առուտուր արա», կասես թե յես բանձորցի հալ եմ, վոր սաղ որն արորից պոկ չգամ, կամ լենբերանցի ճիճու պահող եմ կամ թե լյաքեցի, վոր գլուղեբում չարչություն անեմ: Պատասխան տվի, թե՝ «նաչալնիկ, Զիվանշիրոֆներից վոչ-վոք յերբեք վո՛չ մաճկալ ե յեղել, վո՛չ ել բոստանչի: Իմ հեր Կուրբան-բեկը եդ ճամպով չի գնացել: Նրա տղա Հելդար-բեկն եմ, յես ել եդ ճամպով չեմ գնա»: Հոնքերը կիտեց, չերեսը շուռ տվեց ու ձին քշեց, գնաց:

ՍԱՖԱՐ-ԲԵԿ.—Եդ խոսքերիցն ոգուտ չկա: Թող ով ինչ ուզում ե, տալի: Ի՞նչ ֆայդա առանց գողանովի միս ուտելու՝ ձի նստած՝ աշխարհը չափելուց: Դիշերն անց կացավ: Զգիտեմ՝ ինչո՞ւ Ասկեր-բեկն ուշացավ: Ըհը՛, հրես գալիս ե: (Ասկեր-բեկը մոտ ե գալիս):

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.—Հելդար-բեկ, յես ել պատրաստ եմ: Բխամիլան, ճանապարհ ընկնենք: Ինչի՞ յես եղպես տխուր ու մտածկոտ:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Ե՛ր, տղերք, չգիտեմ, թե վոր պատճառ-բերանն ե ինձ մատնել նաչալնիկին: Բանից դուրս ե գալիս, վոր նա մահալը պտտելու յե դուրս լեկել: Եսոր որալի մոտից անցնելիս ինձ կանչեց ու ասում ե. «Հելդար-բեկ, ավազակություն ու գողություն մի անի»:

ՍԱՖԱՐ-ԲԵԿ.—Ասեւ ե թե՛ սոված մեռիր:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Իհարկե, ասես թե սաղ Ղարաբաղում միմիայն Հելդար-բեկն ե՛ կովի ու հորթի գողը. յեթե նա ձեռք քաշի, մահալը կհանդարտվի: Հորթ գողանալն ել ենքան հեշտ բան չի մեզ համար: Հիմի չերկմիտ եմ. թե գնանք են աղջիկը փախցնելու, վախենում եմ՝ հերն ու մերը գանգատ տան: Ելի նորից պիտի զաչաղ ընկնեմ:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.—Հելդար-բեկ, սաղ Ղարաբաղը գիտի, վոր են աղջկանը հերն ու մերը քեզ են տվել: Զգիտեմ՝ պատճառն ի՞նչ ե, վոր ուզում ես նրան փախցնես:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Պատճառն են ե, վոր փող չեմ ճարում, վոր հարսանիք անեմ, տուն բերեմ: Դրա համար Սաֆար-բեկը խորհուրդ ե տալիս՝ զոռով փախցնեմ ու ծլկվեմ, վոր հարսանիքի ծախսը մեջտեղիցը վերանա. բայց եդ ինձ համար մահից վտտ ե. կասեն, թե Կուրբան-բեկի տղան փող չճարեց՝ հարսանիք անի, նշանածին փախցրեց: Սաֆար-բեկն ասաց, թե վախենալուցս եմ ես՝ պես ասում. դրա համար ել բարկացած քեզ կանչեցի, վոր ինձ ընկերանաս:

ՍԱՖԱՐ-ԲԵԿ.— Ինձ համար մեկ եւ Դու իմ ներկայութեամբ ախ ու վախ արիւր, թե յերկու տարի լե՛ չես կարողանում հարսանիք անել ու նշանածիդ տուն բերել: Յես ել ասացի՛ թե ուզում ես, գամ, գնանք, զոռով դուրս բերենք ու փախչենք: Հիմա դու գիտես:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Հեյդար-բեկ, եդ մտքիցն անց կաց, ինձ մի տասնհինգ որ ժամանակ տուր, չես քեզ համար հարսանիքի պատրաստութիւն տեսնեմ, կարգին հարսանիք արա ու նշանածիդ տուն բեր:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Վերտեղից պիտի հարսանիքի պատրաստութիւն տեսնես:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Տասնհինգ որվա մեջ թափրիկ կգնանք ու կգանք, դա-չադի ապրանք*) կբերենք, մեկին-մեկ ոգուտ կստանանք, ոգտից հարսանիքի ծախսը կանես:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Լավ ես ասում, թե դրուստ լինի: Թափրիզում ապրանքը ձրի թափած ե, վոր հավաքես, բերես:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Իհարկե, ձրի ապրանք չկա. փողով կառնենք:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Զարմանալի բան ես ասում. փող վերտեղից ճարեմ:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Յես ել փող չունեմ: Ահա թե ինչ եմ առաջարկում. Հաջի-Կարան Աղջաբեզում սովորաբար ե կ հարուստ մարդու անուն ունի. նրանից պարտք կվերցնենք, կգնանք ապրանք կբերենք, կծախենք, փողն իրան կտանք, ոգուտը մեզ կմնա:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Ասում են՝ Հաջի-Կարան շատ ժլատ մարդ ե. ըսկի նա մարդու փող կտա:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Յես նրան ել թամահի կզցեմ ու կընկերացնեմ մեզ հետ: Ազա մարդ ե, փող ել կտա, ինքն ել մեզ հետ կգա:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Լավ, յեթե վստահ ես, համաձայն եմ: Բայց պետք ե ամենից առաջ չես ես աղջկանը տեսնեմ, անվալաթն իմացնեմ. խոսք եմ տվել, ես գիշեր ինձ սպասում ե:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ և ՍԱՖԱՐ-ԲԵԿ.— Շատ լավ, շատ բարի:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Դե, հիմա դուք գնացեք, հետո չես կգամ, կհանդիպեմ ձեզ, Հաջի-Կարալի մոտ կգնանք:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ և ՍԱՖԱՐ-ԲԵԿ.— Վողջ չեղիր. գնանք, բայց առավոտը շուտ արի: (Գնում են: Յեսաբեք փոխվում ե. հեռվում մի վրան ե յերեվում, վրանից օտար բայլ հեռավորութեան վրա, քփի յեռեվում—Սոքա-խանումը ճառագայրի գեղեցիկ հագուստով, մեծաքան ծածկոցը գլխին գլե ու գնե ե ճայում, մերք ճոռում, մերք վեր կենում)

*) Մաքսանկարութեամբ ներմուծվող ապրանք—контрабанда

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—Տե՛ր աստված, տեսնես ելի ի՞նչ պատահեց, չեկալի: Կեսգիշերն անցալ, դեռ չի յերևում. արդեն լուսանում է, չգիտեմ ի՞նչ անեմ. միքի՛չ ել կսպասեմ, թե չեկալ՝ ել ճար չկա, պետք է վրանը վերադառնալ. (վոսթի յե կանգնում, այս ու այն կողմը նայում): Չե, չեկալ, յերևի ել չի դա. անկասկած չի գա Տեսնես ելի վոր գոթին է պատահել, իր հետ ընկերացրել, ձիու ու տավարի գողութիւն տարել, թե չե մինչև հիմա պետք է չեկած լիներ. հախիցը չեմ կարողանում գալ. յեթե ես անգամ ել գողութիւնը բացվի, ելի պիտի դաշաղ ընկնի, որս սե անի, ելի յերկու տարով ինձ բանտարկյալ դարձնի. աստված է վկա, ել չպիտի սպասեմ, ել աչքս նրա ճամպին չպիտի մնա, ուրիշի կառնեմ. նրա միտքն են է, վոր հորս տանը մազերս սպիտակացնի (նըստում է գեօցից). Խհ, ես ինչ վատ բաներ են անց կենում մըտքովս: Աստուծով չի գնա. յերգվեց, թե՛ մինչև քեզ չփախցնեմ, մի վոչխար գողանալու ել չեմ գնա: Անկասկած, ուշանալն ուրիշ պատճառ ունի: Ա՛խ, երեսկ թփի յետևիցն ականջ դնելու լիներ ու լսեր, թե ինչ եմ ասում՝ «Ուրիշի կառնեմ», տեսնես կհավատա՞ր: Իհարկե չեր հավատա, վորովհետև գիտեի, վոր դուք չեմ ասում, համբերութիւնս հատել է, բերանս ինչ գալիս է, ասում եմ: Պհւյ, խշխշոց. գալիս ե: (Յոյ գամաճակ Հեղդար-բեկը ձի նըստած գուրս է գալիս քփի յեօնվից ու ձիուց ցած իջնում):

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Սոնա-խանում:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ. Հելդար, դո՞ րես:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Յես եմ:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—Մենակ ես, ապա ո՞ւր են ընկերներդ:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Ընկեր չունեմ, մենակ եմ յեկել:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—Եդ ի՞նչ ես ասում: Ինչո՞ւ յիս մենակ յեկել: Հերս ու յեղբայրներս քնած են վրանում. ուշ յեկար, ա՛յ, հիմա արդեն լուսանում է: Ինձ վոր վրանում չտեսնեն, գլխի կընկնեն, վոր քեզ հետ եմ: Զի կնստեն, մեր յետևից կընկնեն է ձիուդ հետքով մեզ կհասնեն, ինձ ձեռիցդ կխլեն. հետո ել ինձ յերբեք չես տեսնի:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Հիմա քեզ հետս տանելու չեմ յեկել. մի վախենա:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—(Բարկացած) Ի՞նչպես թե չես յեկել հետդ տանելու. եդ ի՞նչ ես ասում:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Ուրիշ մասլահաթ ունեմ. լսի՛ր:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—Ել մասլահաթ չկա. ձիդ քաշիր, քեզ հետ կգամ. յես ել մեր վրանը չեմ կարող դառնալ:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Սպասիր, բան եմ ասում:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— (Զիռւ սացնը բռնելով) Լսել չեմ ուզում. հիմի աս-
պանդակը բռնիր, ասելիքդ ճամպին կասես:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— (Զեռֆից բռնելով) Աղջի, մի տես, թե ինչ եմ ասում.
վերջապես մի շտապիր եղպես:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— Լույսը բացվում է. կանգնելու ժամանակ չի. խոսքդ
հետո կասես:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Աղջի, փող եմ ճարել, խոլիսի սովորության համաձայն
կարգին հարսանիք կանեմ. ել ինչձե փախցնեմ, հո քեզ ձեռիցս
խող չկամ:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— Սուտ ես ասում, փող ճարող լինեյիր, ես չերկու
տարում կգտնեյիր: Յես հարսանիք չեմ ուզում. հենց ենպես, ա-
ռանց հարսանիքի կգամ. սիրածի հետ փախած մենակ լես չեմ,
որական հարյուրավորներն են փախչում սիրելով. ամոթս վճարն
ե, քսան աղջկանից մեկը հարսանիքով մարդու չի գնում:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Ա՛յ ջանք, սիրածի հետ փախածների հերն ու մերը
հոժար կամքով չեն տալիս սիրածին: Աղջիկը ճարահատլալ փախ-
չում է սիրածի հետ: Վերջապես, քո հերն ու մերն իրանք են
քեզ ինձ տալիս: Մի՞թե չեն ասիլ՝ «անամոթ, եղ ինչ արիր, մեզ
խալտառակ արիր»: Ել յես ի՞նչ պատասխան տամ:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— (Մի քիչ մտածելով) Փողը վճարտեղից ես ճարել:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Նստիր, ասում եմ, ու ականջ դիր, ասեմ, թե վորտե-
ղից եմ ճարել:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— (Գեցնից նստելով) Լավ, ասա, տեսնեմ:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Գիտես, թե զաչաղի ապրանքը վորքան թանգ, վոր-
քան շահավետ է:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— Դու ի՞նչ գործ ունես զաչաղի ապրանքի հետ: Դու
հո սովզաքյար չես, վոր եդ հաշիմներն ես անում: Դե, տեսնեմ,
վորքան փող ես ճարել:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Վերջապես ականջ դիր, տես, թե ինչ եմ ասում. Ռու-
սաստանը ֆրանգի չիթ ծախելու իրավունք չի տալիս: Ահու վոչ-
վոք չի կարողանում գնալ չիթ բերել. թե զոչաղի մեկը կարո-
ղանա մի-չերկու բեռ բերի՝ չգիտեմ:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— Ա՛յ մարդ, իմ ի՞նչ գործն է, թե Ռուսաստանը
ֆրանգի ապրանքն արգելել է: Աստված տար, են գլխիցն արգելի
ժողովրդին չիթ շոր հագնելը: Ասա տեսնեմ, ճեմից ես փող
վերցրել:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Աղջի, չես թողնելու, վոր խոսքս վերջացնեմ: Բայց ես-

տեղի ժողովուրդը թամահ ե անում ֆրանգի ապրանքին: Տեսնելու՝ ել վոչ կարմրին են մտիկ անում, վոչ կանաչին: Ասկերբեկն ասում ե, վոր գեղեցիկ ու եթան ե, և գուլնը չի գնում: Կանայք եդ տեսակ չթի համար գժվում են, ոսի չիթն իսկի բանի տեղ չեն դնում:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—Վերջապես, ընչիս ե պետք ֆրանգի թե ոսի չիթը. ջհաննամը գնան յերկուսն ել. խոսքդ ասա:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Ասում են, վոր նաչալնիկի կինն ել միշտ ամուսնուց թագուն ֆրանգի չիթ ե առնում: Հաջի-Ազիզը նրան տասը թումանի ֆրանգի չիթ ե ծախել:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—Ջհաննամը-գյուրը, թե ծախել ե: Չգիտեմ, թե եդ չիթը վորտեղից ե բերնդ մտել: Հեյդար, դու գժվել ես, եդ ինչեք ես դուրս տալիս գլխիցդ:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Ինչ ել վոր լինի, հասկանա՞ւմ ես, թե ֆրանգի չիթն ինչ ազիզ բան ե:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—Հասկանալն ընչիս ե պետք: Թե՛ յես ֆրանգի չիթի առուտուր անող եմ:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Շատ լավ, յեթե հիմա մի անգամ գնամ ֆրանգի չիթ բերեմ, սովդաքայարներին տամ, յերկու հարսանիքի ծախսի փող կհանեմ:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—Ա՛ա, մինչև հիմա զկուտալով եդ ելիր ուզում ասել: Բարաքյալլա, յես ել հավատացի, վոր ես տղան իսկապես փող ե ճարել: Վիր կաց գնանք, բավական ե, ա՛յ, հիմա լույսը կբացվի:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Փող եմ ճարել, սուտ չեմ ասում:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—Թե փող ես ճարել, հարսանիք արա, ել ինչո՞ւ յես ֆրանգի ապրանք առնելու յետևից ընկնում:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Վերջապես, պարտք եմ վերցրել, պարտատերն ինձ այն պայմանով ե փող տալիս, վոր ֆրանգի ապրանք բերեմ, ծախենք, ոգուտը կես անենք: Յեթե չիթ չբերեմ, պարտք չի տալ:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—Յես եդպիսի ոգուով գլուխ բերած հարսանիք չեմ ուզում. վեր կաց գնանք: Յեթե ֆրանգի ապրանքն եղպես ոգուտով ե, ել ինչո՞ւ փողատերը շահն ուզում ե քեզ հետ կես անել. ինքը մենակ կգնա, կբերի, ու սաղ ոգուտը իրեն կֆիսա ելի:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Ինքը սովդաքայրը վախկոտ մարդ ե. յեթե յես նրա հետ չգնամ, ել նա վո՞նց կհամարձակվի Արազի մյուս ափը վրտ դնել. զազախները բուրդը բարերար կանին:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—Իսկ քոնդ չե՞ն անի:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Յես գողութիւն, ավազակութիւն սովոր մարդ եմ. հա-
ղար ու մի աղվիսի Փանդուֆիլ գիտեմ. յես ղապախների աչքին
կերեամ, վոր ինձ դիպչեն:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—Դու ես ժամանակն ել. չերբ գողութիւն, ավազա-
կութիւն եյիր գնում, ասում եյիր, թե՛ ինձ տեսնող, ճանաչող
չի լինի: Բայց հո տեսան, ճանաչեցին, յերկու տարի ղաչաղ եյիր
ընկել, տան յերես չեյիր տեսնում. հիմա մարդամեջ ես դուրս
յեկել, ելի ուզում ես նուէնը կրկնես, նորից ղաչաղ ընկնես, ինձ
լաց ու շիվանի մեջ թողնես: Յես հոժար չեմ, վեր կաց գնանք,
հարսանիք չեմ ուզում:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Ասեմք, թե հարսանիք չես ուզում. վերջիվերջո պետք
ե, վոր յես մի աշխատանքի աղբյուր ունենամ: Մի՞թե հաց ու-
տել չես ուզում:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—Աստված վողորմած ե, սոված չենք մնա:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Խնչպես թե սոված չենք մնա. ասում ես՝ գողութիւն
մի գնա, ավազակութիւն մի գնա, ղաչաղի ապրանք ձեռք բերե-
լու յետեից մի ընկնի, հո հացը չերդկիցը չի ցած ընկնելու:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—Լուսը բացվում ե, դե վեր կաց, գնանք: Ինձ հե-
տըդ տար, տանդ թող: Յերկու շաբաթից հետո, թե ուզենաս,
ավազակութիւն կդնաս:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Դե վոր թուլլ ես տալիս, յերկու շաբաթ հորդ տանը
նստիր. յիթե հետո հարսանիք չանեմ, քեզ տանեմ, ել ինձանից
ավելի գարշելի մարդ չկա:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—Ձեմ ուզում, չեմ ուզում. յես հիմա կգնամ, վեր
կաց, գնանք: (Պոսի յե կանգնում):

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Գլխովդ պտուշտ գամ, ցավդ տանեմ, վոտներդ պաչեմ,
աղաչում եմ, յերկու շաբաթ համբերութիւն ունեցիր, յերկու
շաբաթից հետո, ալլահը վկա, քեզ հարսանիքով կտանեմ: Քեզ
առանց հարսանիքի տանելն ինձ համար մահից ել վատթար ե
թվում, հորդ ու մորդ մոտ ինձ խալտառակ մի անի:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—Յերկու շաբաթ սպասելն ավելի յե, քան դժոխքի
տանջանքը: Ել չեմ կարող մնալ, վեր կաց գնանք:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Աստված սիրես՝ խոսքիս ահանջ դիր:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—(Պկտում ե լաց լիցե) Հեյդար, տեսնում եմ, վոր
դու ել ինձ առաջիտ նման չես սիրում:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Սոնա-խանում, սիրտս մի վառի, ել չեմ դիմանա, ձի
նստիր, գնանք: (Պոնա-խանումն ուզում ե վոսն ասպանդակը
դնել, արգեն լուսանում ե. Պոնա-խանումի մայրը—Թեյրա-
խանումը գուրս ե գալիս վրանից ու կանչում):

ԹԵՅՅԱՆ-ԽԱՆՈՒՄ.— Սոնա, ա՛ Սոնա, աղջի՛ Սոնա, հե՛-հէ՛:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— Վա՛յ, դա՛դա, վա՛յ. մերս կանչում ե, ել չեմ կարող
գնալ (Իսկույն յեկեք գեօնիցն ե կոչում):

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Աղջի, բա յ՞ն ինչ անեմ:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— Ել եստեղ մի կանգնի, հեռացիր, մերս շուտով ես
կողմը կգա:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Դե, ասա, յերբ գամ:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— Գնա, յիլ յերբեք ինձ չես տեսնի:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Սոնա, խոսքդ փոխիր, թե չե ես խանչալը սիրտս
կխրեմ, ինձ կսպանեմ:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— Վո՛չ, վո՛չ, թե աստված սիրում ես, դնա, դաշաղի
ապրանք բեր, հետո արի, հարսանիք արա: Հեռացիր, հեռացիր,
թո՛ղ մերս քեզ չտեսնի:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ — (Գրկելով համբուրում ե քուռը) Հիմա ճամպա չեմ
ընկնում, չարդ տանեմ, դարդ մի անի: Տես հա, ինքդ թուլ
սվիր:

ԹԵՅՅԱՆ-ԽԱՆՈՒՄ.— Աղջի, Սոնա, վճրտեղ ես: (Լեյզար-բեկը շատով
ծի յե նստում ու արագ հեռացում):

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— Եստեղ եմ, ա՛յ մեր, գալիս եմ:

ԹԵՅՅԱՆ ԽԱՆՈՒՄ.— (Մոռեցում ե) Աղջի, եսքան ժամանակ լինչ ես
անում չորումը:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— Ա՛յ մեր, ցերեկն եստեղ խալին փռել՝ նստել եյի,
գիշերը հիշեցի, վոր խալին եստեղ մնաց, տեղիցս վեր կացա, չե-
կա վերցնելու, վոր առավոտը հորթարածների ու տավարածների
ձեռքը չընկնի, չտանեն: Խալին վերցրի բերում եյի, մեկ ել վոտ-
նամաններիս մեկը վոտիցս դուրս եկավ, ես մուրթը տեղը փընտ-
ռում եմ, չեմ գտնում (կռնալով վոնճամաճն ե փնտռում):

ԹԵՅՅԱՆ-ԽԱՆՈՒՄ.— Ձեա կարողանում վոտդ դուզ գետնին դնե՛ս, վճիր
կողմն ընկավ:

ՍՈՆԱ ԽԱՆՈՒՄ.— Ա՛յ, հենց եստեղ ընկավ (ձեռքով գետնը ցույց
ալով):

ԹԵՅՅԱՆ-ԽԱՆՈՒՄ.— (կռնալով) Բա ո՛ր ե, թե վոր եստեղ ե ընկել:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— Տես, ա՛յ, գտա (վոնճամաճներից մեկը ձեռքից
բռնած՝ ցույց ե ալիս):

ԹԵՅՅԱՆ-ԽԱՆՈՒՄ.— Դե, հագիր, գնանք (Պոնա-խանումը վոնճամաճը
հագնում ե ու մոր հեռ հեռացում):

ԳՈՐԺՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԿՐՈՐԴ

Յերկրորդ գործողութիւնը կատարւում է Աղջարեզի գյուղի շուկայի մի անկյունի խանութում, ուր ցիրոցան: փռված են դադաքի, կտավի, շիւսի, հասարակ չիթի թուփեր: Հաջի-Կարան կիսազազը ձեռքին նստած է տխուր:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Աստուած կտրի եսպես բազարը, եսպես առուտուրը: Ի՜նչ ծանր եր շիւս տվող շուն-շանվորդու ձեռքը: Երեք ամիս է, ինչ տանել եմ դալումը, բերել, հինգ թուփ չեմ ծախել: Ապրանքիս լիւրեսին մտիկ տվող չկա: Կասես թե մեռւտների լի: Վոչվոք մօտ չի գալիս: Առուտուրը եսպես լինի, մի տարուամիս ել չեմ կարող ծախել, վերջացնել: Տունս քանդվեց, դնաց: Ես ի՜նչ բան լիւկավ գլուխս: Հինգհարյուր մանեթ նաղդ փող տաս, ողորց, շահից ձեռք քաշես, մալան ել յետ չգն: Ըսկի տեսնված բան է ես: Տունդ քանդվի, չիթ ծախող: Դուռդ յերեսիդ փակ փնա, չաղբա ծախող, քեզ տեսնեմ հեշ խեր չունենաս, քո ծախած ապրանքի ողորտը չուտես սաղ-սալամաթ: Ո՛ֆ, փֆ... (ձեռքերը ծնկներին գարկելով): Զալումի տղա-զալում, հարյուր անգամ դուրանով, մարգարեի աւնունով յերդում կերալ, թե՛ եդ տեսակ ապրանքի մեծ պահանջ կա: Աղջարեզու բազարում յերեք որում բոլորը կծախես... Յերեք որը յերեք ամիս դարձալ: Ի՞նչ թե յերեք ամսում, յերեք տարուամիս ել չի ծախվի: Ի՜նչ լավ խաբեց, եդ հաշվով յես ուղիղ հարյուր մանեթ ֆրաս ունեմ: Ես դարդն ի՜նչ անպատճառ կսպանի: (Պչդ ժամացակ եռուգավերգի մուհզզիքը մոտ է գալիս ու անակնկալ ասում):

ԽՈՒԴԱՎԵՐԴԻ.—Սալամ-ալիքցում, հաջի, ի՜նչպես է ձեր հոր փառաւորված անունը:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Ալիքցում-սալամ. նաշիրի կտորն ինչ արժի:

ԽՈՒԴԱՎԵՐԴԻ.—Ձե, յես ձեր հանգուցյալ հոր անունն եմ հարցնում:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Ինչիդ է պետք, սիրելիս:

ԽՈՒԴԱՎԵՐԴԻ.—Ի՜նչպես թե ինչիս է պետք: Վերջապես յես մի «ուլ-բաթվա սուրա»*) կարդացի, ուղում եմ այն ձեր հոր անվան նըվիրել:

*) Աղոթք, փորն ասելիս աղոթաբարը հիշում է այն մարդու անունը, փորին պիտի բաժին ընկնեն այդ աղոթքով խնդրված աստվածային պարգևները:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Շատ, շատ շնորհակալ եմ, սիրելիս. լավ. այդ բարի գործը վճարողից միտդ ընկավ:

ԽՈՒԴԱՎԵՐԴԻ.— Ի՞նչպես թե վորտեղից միտս ընկավ: Այսօր առավոտը մեր տան առջևից անցնելիս դուք ինքներդ ասել էիք՝ վորդուս. «Ասա հորդ, թող եսօր իմ հոր համար մի «ուրբաթվա սուրա» կարգա, գա, մի արասի կտամ»:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Յէս, ի՞նչպես: Եդ ի՞նչ ես ասում: Գժվի՞լ ես:

ԽՈՒԴԱՎԵՐԴԻ.— Հաջի, առայժմ գժվելու պատճառ չկա. դու ասել ես, վորդիս ինձ հայտնեց, ու յես «սուրա» կարդացի: Յեթե ալժմ արասին չտաս, դուցե են ժամանակ գժվեմ:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Ա՛յ մարդ, ինչ՞ի՞ դու քեզուքեդ հորս համար զուրան պիտի կարդալիր:

ԽՈՒԴԱՎԵՐԴԻ.— Ինձուինձ չեմ կարդացել: Դու ասել ես, յես ել կարդացել եմ:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Յերեք յես եղպես բան չեմ ասել, եդ անկարելի բան է. միշտ ինքս եմ հորս համար զուրան կարդում. կյանքումս վոչ-վոքին չեմ խնդրել փողով զուրան կարդալու:

ԽՈՒԴԱՎԵՐԴԻ.— Հաջի, ի՞նչ մեծ բան է մի արասին, վոր եղքան խոսում ես. յեթե չես ել ասել, վորդորմություն է, տուր՝ գնամ. թեպետ վորդիս նշանով քո մասին ասաց:

ՀԱՋԻ ԿԱՐԱ.— Սիրելիս, վորդիդ սխալվել է. յերեի ուրիշն է պսել, զնա ման արի գտիր, արասիդ առ: Եսպիտի քյասադ բաղարում մի շահի ոգուտ չունեմ, մի արասի վճարողից ճարեմ, քեզ տամ: Աստուծ սիրուն, դուքանիս առաջը մի կարի, մուշտարի յե դալիս: (Խուզավերցի՞ն հեռանում է: Պյո ժամանակ Ասկեր-բեկը, Սաճար-բեկն ու Հեյդար-բեկը մոտենում են):

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Սալամ-ալեյքո՛ւմ, հաջի:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— (Գլուխը բարձրացնելով) Ա՛յ, արեյքո՛ւմ-սալամ: Հաջին ձեր չարը տանի, ներս համեցեք: (Բեկերը ներս են մտնում խանութ ու մտնում):

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Բարով, հազար բարի յեք յիկել. ձեր չարը տանեմ: Իմ գլխի վրա տեղ ունեք: Դուքանս ձեզ փեշքեշ. չիրժւխ կբաշեք. թե՞ դայլան կուզելիք:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Ղալլան ենք քաշում:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Ես սհաթին, ձեր ցավը տանեմ (շաղկով դայլան է պատրաստում):

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Հաջի, վճնց է ձեր բաղարը: Առուտուրը ընվ է:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Աստված բարաքյաթ տա: Յավդ տանեմ, յեթե ապ-

բանքը լաֆն է, բաղարը լերբեք քյասադ չի լինիլ: Միթե չգիտես, վոր յես դուքանուս վատ ապրանք չեմ պահի:

Որական ծախվում ե: Յերեկ դուքանս բոլորովին դատարկվեց: Ղալա պատվեր ուղարկեցի, ձեր խոնարհ ծառան—տղաս նոր ապրանք ուղարկեց. ետոր հավաքեցի ու լցրի. (ղալաճը տալով՝ ձեռք մեկնում ե դարակին, բեկեռի առաջն ե գնում դադաթ, օխլա): Հաջին ձեր չարը տանի, վորքան ուզում եք, ջուր կեցեք, լերդվում եմ դուքանով, լերդվում եմ մարդարելի անուշտով, վորդուս—Բաղալի հարսանիքը վոչ տեսնեմ, թե սուտ եմ ասում—վողջ Աղջարեղի մեջ սրանից լավը վոչվորի մոտ չեք գտնի: Սրանց դումաշն ուրիշ բան ե: Մուշտարին չի թողնում, վոր մի շունչ քաշեմ, իրար ձեռից խլում ե. չեթե եզուց եստեղից անցնելու լինեք սրանցից վոչ մեկը խանութում չեք տեսնիլ: Առեք, տարեք:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.—Ինչնե՞րիս ե պետք, Հաջի, նեղություն մի քաշիլ, ապրանքդ տեղահան մի անի:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—(Զարմացած ու վեհալի) Ի՞նչպես թե ինչներիդ ե պետք: Միթե սովդա չպիտի անեք: Բալութմը մոտ ե. միթե թաղա շոր չեք ուզում:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.—Վոչ, հաջի, մենք թաղա շորի համար չենք չեկել, ուրիշ բան ունենք քեզ ասելու:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Յեթե նազդ փող չունեք, փոխարենը չուղ կարող եք տալ, միայն թե կովի արդար չուղ լինի:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Այ մարդ, չուղ լինեք, մենք կուտեյինք, վոչ կովի, վոչ ել վոչխարի չուղ ունենք: Ականջ դիւր, տես, Ասկեր-բեկն ինչ ե ասում:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—(Հոգեհեղ կիսելով) Իսերաստծու, նեղություն քաշեք, հենց ես բոպեյիս հեռացեք: Մի ուրիշ անգամ կդաք, կխոսենք: Մուշտարի դալու ժամանակն ե: Իսկ դուք խանութի առաջ կըտրել եք:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.—Հաջի, շատ կարևոր գործ կա. առուտուրը թող միքիչ ուշ լինի, վերջապես մենք եստեղ հատուկ քեզ համար ենք չեկել:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Աստված վկա, հիմա ժամանակ չունեմ: Հետո կխոսենք: Նեղություն քաշեք, հեռացեք:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Այ մարդ, հո մեզ դուրս չպիտի անես, ի՞նչ մարդ ես դու:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Գլխովդ պտուտ գամ, չես դուրս չեմ անում, այլ խընդ-

րում եմ, վերջապես յես քյասիր մարդ եմ, դուք իմ ֆլասին հո-
ժար չպիտի լինեք: Յեթե դուք յեկած չլինեիք, յես մինչև հի-
մա հիսուսն թողի դադար չիթ ծախած կլինեի:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Ասկեր-բեկ, ես ի՞նչ մարդու մոտ բերիր մեզ: Վեր-
կացեք, գնանք, սրանից մեզ խեր չկա:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.—Հեղար-բեկ, իսեր աստուծո, սուս կաց. հաջի, մի՛
նեղանա: Մի դալլան տուր, քաշենք. իսկույն կհեռանանք:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Տղաս մեռնի, թե սուտ եմ ասում: Քիսուսն ել թամբա-
քու չկա. վերջին ֆնացորդը թափ տվի ու լցրի: Դե՛, բարով
դնաք:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.—Հաջի, ճիշտ են ասել, թե վոր աստված մարդուս չտա,
մարդկանց տվածովը չի հարստանա: Ախր, յես գիտեմ, վոր Ադ-
ջաբեղում դու լերեք ամսումը լերեք թողի դադար չես ծախել:
Ծովի չափ ֆլաս ունես: Մենք չեկել ենք, վոր քեզ տասնհինգ
որում հարյուր մանեթ ողուտ տանք: Ափսոս, վոր բախտիդ չբա-
նեց: Մնաս բարով (վոթի յեմ կաճգնում, շուռ գալիս, վոր
հեռացան):

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Մի դեսը մտիկ արե՛ք, տեսնեմ, թե եդ ինչ եք ասում.
Ի՞նչպես թե տասնհինգ որումը հարյուր մանեթ:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.—Ել ի՞նչ պիտի ասենք, չե՞ վոր դու մեզ չլսեցիր, ափաշ-
կարա մեդ դուրս արիր:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Աստուծ սիրուն, նստեք, առուտուրը ջնանամը: Նըս-
տեք, յես չեյի կարծում, թե դուք կհեղանաք, թե չե կհոժար-
վեյի հարյուր թուման ֆլաս անել, միայն թե ձեզ չստեյի—գնա-
ցեք: Մի մարդ չի ճարվիլ, վոր ինձանից մի ծանր խոսք լսած
լինի:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.—Թե եդպես ե, գլխներիս վրա կնստենք: Ասեմ թե ինչ
նպատակ ունենք (բոլորը նորից նստում են):

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Դե՛, մի ասեք՝ տեսնեմ, հաջին ձեր ցալը տանի, հա-
րյուր մանեթը վճրտեղից պիտի ստացվի, եդ բարին ո՞վ ե՛րե-
րում:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.—Եդ բարին բերողը Հեղար-բեկն ե (մասնացույց ե
անում Հեյդար-բեկին):

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—(Փրագ) Վճրտեղից կստացվի: Վա՛յ, դադեդ առնեմ,
դալլանը լցնեմ, չարդ տանեմ:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Թամբաքու չկա, ել ինչո՞վ պիտի լցնես:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Տոպրակումը կա, դու միայն ծխիր: (Փրագ ձեռք
մեկնում ե, օտպրակից քամբաֆու հանելով՝ դալլանը լցնում)

ու սիրով Հելգար-բեկիճ առաջարկում, յետեւ գեպի Աս-
կեր-բեկը գարձնում):

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Դե մի ասա, տեսնեմ, թե ինչպես պիտի բերի:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Հաջի, ես ինչքան ապրանք ես դարսել եստեղ. ըսկի մի
դուռուշ ոգուտ կմ դրանից:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Յեւ ինչ գիտեմ, կա թե չկա, խոսքդ ասա:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Հաջի, դու գիտես, թե ինչ կտրիճ մարդ ե Հեյդար-
բեկը:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Հա, ասում են, վոր դոչաղ մարդ ե:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Ամենքը գիտեն, վոր Հեյդար-բեկի անունը լսելիս թըռ-
չունը վախից փետուրը թողնում ե:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Եսպիսի ժամանակներում, չարդ տանեմ, քաջություն-
ից լաջի են ե, վոր մարդու ջերը լիքը փող լինի:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Վոր քաջությունը չլինի, փող ել չի լինի: Հաջի, խոս-
քիս ականջ դիր: Տեսնում ես, թե հիմա Ֆրանգի ապրանքը
ինչքան ե թանգացել: Թավրիզում արշինը մի աբասով
առած չիթն եստեղ վեց շահով ե ծախվում. գրվանքան մի մա-
նեթով առած թեյն եստեղ մանեթուկեւ ե գնում: Գիտե՞ս, թե
պատճառն ինչ ե:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Վոչ, չգիտեմ:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Պատճառն են ե, վոր թռչունը վոր թռչուն ե, չի կա-
րողանում Արագի մյուս կողմն անց կենալ՝ դարբաղցիների, հալ
յասաուլների, մաքսատան պահակների և զազախների ահու:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Լավ, դուք ուզում եք թռչունից ավելի դոչաղ լինեք
ու Արագի են կողմն անց կենալ:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Իհարկե, յերբ Հեյդար-բեկը մեզ հետ ե, պահակը կամ
յասաուլը մեզ ինչ կարող են անել:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Յեղած պահակներին ու յասաուլներին մի կողմ
դրած՝ չեթի զազախները չլինեյին, ամիսը յերկու անգամ կարող
եյի թավրիզ գնալ ու գալ: Պահակն ու յասաուլն ինձ ինչ կա-
րող են անել. աստուծո ոգնությամբ հախից կգալի: Բայց յերբ
ուսի անունն եմ լսում, սիրտս ճաքում ե: Նրանց թուրն ու
թվանքը չի ինձ ենքան վախեցնում, ինչքան նրանց քննչի տա-
նել-բերելուցն ե սիրտս դող բռնում: Ճշմարիտս ասած՝ զազախ-
ների յերեսիցն հազար ու մի փորձանք կարելի չե սպասել:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Ե՛հ, մենք հիստըն ճանապարհ գիտենք: Ղազախներին
կխաբենք՝ ենպիսի տեղերով կանցկենանք, վոր ըսկի մեր իզ ու
թողն ել չեն տեսնի:

ՀԱՋԻ-ԿԱՐԱՄ.— Դե հիմա ասացիք, ի՞նչ կարիք ես ստիպել ձեզ ինձ մոտ գալու:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Դու եստեղ նստած՝ ճանճ քշելով՝ ի՞նչ ոգուտ պիտի ստանաս: Վեր կաց, հետդ շատ փող վերցրու, մեզ ել տուր, քեզ մոտ ել պահիր, գնանք: Առուտուրից մենք գլուխ չենք հանում: Թափրիդուս մեզ համար ել, քեզ համար ել խրիդ արա: Իսկ մենք քեզ սաղ-սալամաթ՝ ապրանքիդ հետ՝ լետ կըբրենք, տեղ կհասցընենք: Տասնհինգ որուսը հարյուր վոսկին հիսուն վոսկի ոգուտ կբերի: Մեզ տված փողի բերած ոգուտը տուր մեզ, քոնիցն ել դու վերցրու:

ՀԱՋԻ-ԿԱՐԱՄ.— Լավ, բա իմ ձեզ տված փողիս շահը:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Վերջիվերջո, շահի փոխարեն մենք քեզ լավություն ենք անում: Մենք քեզ անվնաս կանցկացնենք թալանչի ավազակների մոտից, հնարավորութուն ենք տալիս աշխատել ավելի, քան թե դու յես ուզում: Ամոթ չի, տասնհինգ որով մեզ տված փողիդ շահն ես ուզում: Առանց մեզ դու հո չես կարող վոչ գնալ, վոչ ել ապրանք բերել:

ՀԱՋԻ-ԿԱՐԱՄ.— Ինչո՞ւ չեմ կարող գնալ: Յեթե ուղենամ, հենց եսոր կգնամ, վոչվոք չի կարող ինձանից մի չոփ անգամ խլել: Յես ինքս քանի անգամ կովի յեմ բռնվել թալանչիների հետ:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Այ, հողիս, թեկուզ հարյուր ամգահա լինես, եդ ճանապարհով չես կարող մենակ գնալ ու յիտ գալ: Մենք հո քո քաջությունը չենք ուրանում:

ՀԱՋԻ-ԿԱՐԱՄ.— Ծիշտն ասած, յես սովոր չեմ առնաց շահի փող տալու: Յեթե ձեզ տվածս փողի համար շահ կտաք, ձեզ ակտնջ կանեմ:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Մեզանից ամեն մեկիս հարյուր վոսկի վոր տաս, տասնհինգ որվա համար ի՞նչքան շահ ես ուզում:

ՀԱՋԻ-ԿԱՐԱՄ.— Հարյուր վոսկուն հինգ վոսկի շահ կառնեմ: Ավելին ինչքան վոր ոգուտ ստանաք, ձեզ լինի:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— (Հեղաբ. բեկիճ ու Սաճաբ բեկիճ) Ընկերներ, ի՞նչ կասեք, համաձայն եք:

ՀԵՅԴԱՐ ԲԵԿ ՅԵՎ ՍԱՖԱՐ-ԲԵԿ.— Ել ի՞նչ պիտի անենք վոր, հոժար ենք:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Հաջի, դե փողը պատրաստիր:

ՀԱՋԻ-ԿԱՐԱՄ.— Յե՞րբ եք ճանապարհ ընկնում:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Ես իրիկուն:

ՀԱՋԻ-ԿԱՐԱՄ.— Շատ լավ, փողը պատրաստ ե: Գնացեք, հափնվեցեք, իրիկնապահին մեր տունը լեկեք: Յես ել իմ ձին ու զենքերը կպատրաստեմ, ճանապարհ կընկնենք:

ՅԵԿԵՐԸ.—(Պոսի կաճագեղսով) ցտեսություն, հաջի (գուրս եճ գնում):

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—(Կրանց յեճեվից) Բարով լեկաք: Իրիկունը վերա-
դարձեք:

ՅԵԿԵՐԸ.—Միամիտ կաց (եհռացում եճ):

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Ես շուն-շան վորդու ապրանքի վրա նստելուց հոգիս
դուրս լեկավ: Ղիամաթին կծախվի Պիտի ասեն, թե ֆրանգի ապ-
րանքի առուտուր մի անի, սովդաքյալը ես: Վճի հողը տամ գըլ-
խիս. ա՛յ ես ոսի ապրանք ե, բա ինչո՞ւ չի ծախվում: Չե, թե
վոր ուրիշ գործ չլինի, լես ես ֆիսալ մինչև մահս շեմ կարող հա-
նել: Վեր կենամ, տուն դնամ, պատրաստություն տեսնեմ: Ես-
պիսի ողուտ միշտ ձեռք չի ընկնի: Թե չե՞ դարդու կգժվեմ: (Նա-
ցուքը հավաքում, կողպում ե ու գնում):

Տեսարանը փոխվում ե: Հաջի-Կարայի տունը: Հաջին բա-
նային ձեռքին սնդուկը բաց ե անում, տոպրակից վոսկի հա-
նում: Յերեք հարյուր վոսկի համարելով՝ առանձին քսակների
մեջ ե լցնում: Հետո բերում յեվ իր առաջն ե դնում հրացանի,
ատրճանակը, դաշույնն ու թուրը: Այդ ժամանակ մոտենումն-
երան կինը— Թուքեզը:

ԹՈՒԲԵԶ.—Ա՛յ մարդ, եդ ի՞նչ ես անում: Ինչո՞ւ յես եդ զենքերդ ա-
ռաջիդ շարել:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Ճանապարհ պիտի գնամ:

ԹՈՒԲԵԶ.—Աստ տեսնեմ, ո՞ւր ես գնալու:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Քեզ ասելու բան չի:

ԹՈՒԲԵԶ.—Ի՞նչպես թե ինձ ասելու բան չի, ավաղակության հո չե՞ս
գնում, վոր ինձանից թագցնես:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Դրա նման մի բան ե:

ԹՈՒԲԵԶ.—Յեթե եղպիսի բան ե, իսկի չես կարող գնալ: Վեր կաց
գնա դուքանիդ ապրանքը ծախիր (գեճեքը հավաքում ե):

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Աստված քանդի եսպես խանութը, ջնջվի եսպես ապ-
րանքը, ըսկի ծախվում ե՞ վոր: Թողնելու չես, թե գլխիս մի ճար
անեմ:

ԹՈՒԲԵԶ.—Ա՛յ մարդ, գլխիդ ի՞նչ ե յիդիլ, վոր ուզում ես ճարը տես-
նես: Եդ ի՞նչ ես ասում:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Ել ի՞նչ պիտի գա վոր: Տունս քանդվեց, գնաց: Հա-
րյուր մանեթ մինչև հիմա ֆիսա ունեմ: Բիովս հաց կուլ չի
գնում:

ԹՈՒՔԵԶ.—Քեզ տեսնեմ, բուկդ ենպես բռնվի, վոր ջուրն ել անց
չկենա, ա՛յ դեղնակոթած: Եղբան փող ես հավաքել, վոնց վոր
երեխեքը վեգ են հավաքում, ի՛նչ պիտի անես: Հարուր տարի
իւլ ապրես, ուտես, խմես, հագնվես. փողդ ելի չի վերջանա: Հա-
րուր մանեթի ֆլասի համար ի՛նչ ես քեզ սպանում:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Հազար անգամ քեզ ասել եմ, թե կնիկ ես, գնա քո կնիկա-
բանիդ: Ինձ խրատ մի տա: Զենքերը ցած դիր: (Յեռքը պարզելով՝
հրացանն ու ատրճառակը գուռն է բառում ու վերցնում):

ԹՈՒՔԵԶ.—Ասել ե թե՛ դու պիտի ղինվես՝ մարդ վախեցնես ելի:
Յես, կնիկ տեղովս, քեզանից չեմ վախենա, եղպես քսան հատ
հրացան ու ատրճառակ ել ունենաս վրադ: Հողը գլխիդ: (Յերկու
ձեռքով չափում է նրա գլուխը):

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Անիծված լինես դու, կնիկ, ձեր սեռը ջնջվի՛ աշխարհի
յերեսից. կորի՛ր եստեղից:

ԹՈՒՔԵԶ.—Ա՛յ մարդ, գժվել ես. իմ տնիցն ուր պիտի գնամ:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Զհաննամը, գյողը: Ինձանից ձեռ չպիտի քաշեմ, ի՛նչ
ես ուզում ինձանից:

ԹՈՒՔԵԶ.—Ի՛նչ կլինեք, մինչև որս դու գնացած լինելի՛ր ջհաննամը
ու գյողը, եղ որը տեսնելի, վոր ինձ համար բայրամ լինեք:
Ափսոս, վոր Ազրայիլը քեզ պես գարշելուն թողել է աշխարհի
յերեսին, իսկ սիրուն ջհաններին է սև հողի տակն ուղարկում:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Աշխարհիս յերեսին մնացած գարշելիներից մեկն ել
դու լես, վոր փաթաթվել ես վզիս ու պոկ չես գալիս. կյանքումս
վոչվոքի չեմ վերավորել, վոչվոքի ֆլաս չեմ տվել, ինչո՞ւ լես
գարշելի պիտի լինեմ:

ԹՈՒՔԵԶ.—Վոչվոքի ֆլաս չես տվել, բայց ոգուտ ել չես տվել: Գար-
շելի լես, քանի վոր ունեցած մալդ վոչ ինքդ ես ուտում-խմում,
վոչ ել ընտանիքիդ համար ծախսում: Թե մեռնես, գոնե կնիկդ
ու յերեխեքդ կուշտ փորով հաց կուտեն:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Կնիկս ու յերեխեքս զահրումար ուտեն:

ԹՈՒՔԵԶ.—Քո տանը զահրումար ել չի ճարվիլ: Թե վոր լինեք, են ել
կափսոսալի՛ր՝ մեզ տաս:

ԲԵԿԵՐԸ.—(Նախում է) Հաջի, հաջի:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Ա՛ կնիկ, քաշվի՛ր, գնա: Մարդիկ են գալիս (Թուրքերը
հեռացալով՝ զուռն յեռեկից ակաճ է զնում):

ԲԵԿԵՐԸ.—(Հագնված ներս է մտնում). Սալամ-ալեյքում, հաջի:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Ալեյքում-սալամ, հաջին ձեր չարը տանի, համեցե՛ք
նստե՛ք:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.—Հաջի, պատրաստ ես:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Հա, գլխիդ դուրբան, պատրաստ եմ: Ա՛յ, փողն ել բա-
ժանեցի: Բայց, հաջին ձեր ցավը տանի, յես Թավրիզում ձեր աչքի
առաջ լիբեք հարյուր վոսկու թեյ և ճոթեղեն կառնեմ ու ձեզ
կհանձնեմ, կրերեք:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.—Ինչո՞ւ եղպես, հաջի: Ի՞նչ կլինի, լեթե եստեղ տաս:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Եղպես լավ ե: Դադեղ առնեմ, զանազանություն չկա:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.—Վնաս չունի, թող եղպես լինի: Դե, վեր կաց, դնանք:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Ձեր խոնարհ ծառային միքիչ սպասեք: (Պորգուց ակ-
ցարկելով) Ուղարկել եմ, վոր ձիերն ու նոքարին եստեղ բերի:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.—Քանի՞ ձի յես բերում, հաջի:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Յիրեք ձի: Մեկը տղաս կհեծնի, մյուսը յես, յերրոր-
դին ապրանքը կրարձենք, նոքարը կքաշի: Դուք քանի՞ ձի յեք
վերցրել:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.—Մենք ել ամեն մեկս յերկու ձի ունի—մեկը հեծնելու,
մյուսը բեռան համար: Ես զենքերը քսնն են, հաջի:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Այո:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.—Շատ լավ. դե, հաղնվիր:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Աստված վկա, հաջի, քեզ չճանաչող մարդ լինեք,
սիրտը կճաքեր, վոր քեզ տեսներ:

ՍԱՖԱՐ-ԲԵԿ.—Յես ու իմ աստվածը, յես հաջու մասին եսպիսի կար-
ծեք չունեյի:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Մարդուն գործով կճանաչեն, չարդ տանեմ: Դուք ինձ
արշին չափող եյիք ճանաչում, բանի տեղ չեյիք դնում, ինչալ-
լան կտեսներ, վոր յես վոխկոտներից չեմ: Ջարմանում եմ մի-
քանի դաշաղի ապրանք բերող մարդկանց վրա. իրենց ապրանքն
ու բանումանը տալիս են ճամպին պատահող ամեն մի անցոր-
դի ու դատարկ ձեռով լիտ դառնում:

ՍԱՖԱՐ-ԲԵԿ.—Դու չգիտես, հաջի, թե ապրանք խլողները ի՞նչ խո-
րամանկ են: Մարդու աչքի լասաուլի ու պահակի հազուստով
հո չին յերևում: Տեսնում ես՝ փալանած ձի կամ եղ նստած, մեկ
վոտով ու անգեն դեմուդեմ են դուրս գալիս: Ի՞նչ իմանաս, ա-
սում ես՝ Եհ, խեղճ, աղքատ անցորդ ե: Հենց վոր բոլորովին
մոտ ե գալիս, ել չես իմանում, թե վորտեղից, մեկ ել տեսար՝
զենք ու զրահ մեյդան լեկավ: Ել ձեռք շարժելու ու բարձրացնե-
լու ժամանակ չեն տալիս: Ամեն ինչ թալանում ու խլում են:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Եղ բոլոր փորձանքը գալիս ե մարդու գլխին վախից
ու անգղաղնությունից: Մարդ լիբեք թույլ չպիտի տա վորեւե

մեկին իրեն բոլորովին մոտ գալ, ինչ հագուստ ել վոր լինի հագին: Ինձ պատահեն, կտեսնեք, թե գլխներն ինչ կբերեմ: Ամենքին կփողմանացնեմ, վոր ել վոչ մի դաշաղ ապրանք բերողի ճանապարհ չկտրեն:

ՍԱՖԱՐ-ԲԵԿ. — Հա, ճիշտ ես ասում, մարդ չպետք է վախկոտ լինի և անզգուշ: (Պղծամանակ ցրտ ծառան՝ Քյարամալին ու վորդին՝ Բազալը — ցեքս եմ մեծում):

ՔՅԱՐԱՄԱԼԻ. — Աղա, ձեզը պատրաստ են, ռը պիտի գնաս:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ. — Թավրիզ:

ՔՅԱՐԱՄԱԼԻ. — Թավրիզ, ինձ ել ես ուզում հետդ տանեմ:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ. — Այո:

ՔՅԱՐԱՄԱԼԻ. — Ինչո՞ւ համար ես գնում, աղա:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ. — Ինչի՞դ ե պետք:

ՔՅԱՐԱՄԱԼԻ. — Ի՞նչպես թե ինչիս ե պետք, չե՞ վոր ասում ես, վոր ինձ ել ես հետդ տանում: Բա յես չպիտի՞ իմանամ, թե ինչի՞ համար եմ գնում:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ. — Գնում եմ ապրանք առնելու: Գնելուց հետո կբարձեմ ձիուն, դու կքաշես, կբերես:

ՔՅԱՐԱՄԱԼԻ. — Ա՛յ աղա, անցադիր յե՞րբ ասացար, վոր Թավրիզ ես գնում:

ՍԱԿԵՐ-ԲԵԿ. — Անցադիր պետք չի:

ՔՅԱՐԱՄԱԼԻ. — Վոր եղպես լինի, յես չեմ գա: Մի անգամ ևստեղից առանց բլիթթի Սալան գնացի: Մուրոյի հրամանով ինձ ենքան ծեծեցին, վոր մինչև հիմա չել ցավը մոխցս չի գնացել:

ՍԱԿԵՐ-ԲԵԿ. — Մի վախենա, մուրոյը մեր գնալու մասին չերբեք չի իմանա:

ՔՅԱՐԱՄԱԼԻ. — Զիշտն ասած, իմ ծառայության ժամանակը մոտեցել ե, ուրիշի նոքար կմանեմ: Հաջին քիչ ոռճիկ ե տալիս, փորս ել չերբեք չի կշտանում, յես չեմ գա:

ՍԱԿԵՐ-ԲԵԿ. — Դու ես անգամ արի մեզ հետ: Ծանապարհին ինչքան փորդ կտանի, հաց կտանք: Ամեն մեկս ել քեզ մի թոփ չիթ կըրախշենք:

ՔՅԱՐԱՄԱԼԻ. — Հաջին կրախշի:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ. — Յեթե բեռը սաղ-սալամաթ տեղ հասցնես, յես ել լուսնի լույսն կանեմ քեզ: Քեզ բախշած չիթը թանդ գնով կծախեմ:

ՔՅԱՐԱՄԱԼԻ. — Թող եղպես լինի:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—(Բեկերիճ) Համեցեք, գնանք: (Բոլորը գուրս են գալիս, ապա բեմ է դուրս գալիս Թուրքը մեծակ):

ԹՈՒԲԵԼԶ.—Վա՛յ, ձեր տունն աստված քանդի, մարդուս խաբեցիք, տարտը դա՛շաղի ապրանք բերելու: Թե՛ վոր դուռիս մի փորձանք գա, լերկխեքս վորք պիտի մնան: Վա՛յ, վա՛յ (ծնկներին ռալով հեռացում է):

ՎԱՐԱԳՈՒԹՐՆ ԻՋՆՈՒՄ Ե

ՅԵՐՐՈՐԴ ԳՈՐԶՈՂՈՒԹՅՈՒՆ

Յերրորդ գործողութիւնը կատարւում է Արազի ափին, Ղզլբաշի յերկրում: Բեկերն ու Հաջի-Կարան՝ ապրանք գնած՝ Թափրիզից Արազի ափն են վերադարձել: Ջիւրից իջած հավաքվել են ափին: Արագն աղմկալից հոսում է: Ամպամած գիշեր է, մերթընդմերթ կայծակ է փայլում:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Հիմա եստեղից անցնել չի կարելի. պետք է չորս փրստ եստեղից ներքև հարայ-հրոց բարձրացնել, վոր դաշախ-նեղը ցած իջնեն, իսկ մենք կվերադառնանք, եստեղից անց կըկենանք:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.—Ա՛յ, մարդ, հիմա ես ամպամած չեղանակին բոլորը ներս են խցկվել. Արազի ափին սատանա անդամ չես գտնի. անց կենանք, վոր լեկել ենք:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Յերբեք չի կարելի, յես Արազի ես կողմը շատ անդամ գողութիւն եմ եկել. դաշախներն Արազի ափին միշտ պահված են լինում:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Հեղբար-բեկը ճիշտ է ասում, պետք է զգուշ լինել. եսչես անենք, ինչպես վոր ասում ե:

ԱՍՅԱՐ-ԲԵԿ.—Հաջու խոսքն ընդունելի չե, պետք է ներքևը հարայ-հրոց բարձրացնել: Հաջի, դու բռնհրի յոտ մնա: (Բեկերը հեռացում են գնդի ցած, միմիջ անց՝ աղմուկ է բարձրացում: Վերեվից դաշախները օպտոնազիցված՝ սկսում են յերեբ-յերեբ, Իից-Իից ցած իջնել):

ՂԱԶԱՆԵՐԻՅ ՄԵԿԸ.—Ախ՛, նզովյալներ, լերեկ ալազակներ են: Ձին բռնում, ուղում են անցկացնել:

ՅԵՐԿՐՈՐԴ ՂԱԶԱՆԸ.—Ինձ թվում է, թե մաքսանհնգներ են:

ՅԵՐԿՐՈՐԴ Ե.—Ով ել որ լինի, տեղնուտեղը կիմանանք ու միջոց-

ներ ձեռք կառնենք: (Ղազարեանի գեթ անցնելը զազարում է, միթիւ անց՝ ազմուկը զազարում է: Բեկերը գալիս են Հաջու մոտ):

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Դե, շուտ արեք, անցկացեք, կանգնելու ժամանակը է: (Բոլորը Պարզ են նետում: Գեթի մեջքից Հաջի-Կարայի ձի են սայրաբում է: Հաջի-Կարան ձիուց վայր է ընկնում, հոսանքի ուղղությամբ լող օալիս, յերկու ձեռքով ուռնում: Տյուղից բռնում, ծառից կախվում է ու կանչում):

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Ա՛յ, ամման, Հեյդար-բեկ, Ասկեր-բեկ, Սաֆար-բեկ, ոգնեցեք, խեղդվում եմ:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Հաջի, վրտեղ ես դու:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Եստեղ եմ, բռնել եմ ուռնում: Ճյուղիցն ու կախվել:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Ա՛յ տունդ քանդվի, ենպիսի խոր տեղ ես ընկել, վոր քեզ դուրս քաշել չի կարելի:

ԲԱՆԱՆ.—Այ, ձեր գլխին դուրբան, հորս դուրս քաշեցեք:

ՔՅԱՐԱՄԱՆ.—Ա՛յ գլադա, թող խեղդվի, նրա ապրանքն ու հարստութունը կմնա: Հինգ որ կերեք-խմեք ու քեֆ արեք, ինչի՞դ ե պետք, վոր նրա մասին հոգ ես տանում:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.—Ա՛յ գլադա, սարսաղ-սարսաղ գլխիցդ դուրս մի տալ, խուրջինից պարանը հանիր, տուր ինձ: (Քյարամալին արագ պարանը հանում է ու օալիս):

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Ասկեր-բեկ, շուտ արա, պարանը բեր: (Ասկեր-բեկը պարանը բերում է):

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Հաջի, պարանը դրում ենք, բռնիր:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Ա՛յ, ձեզ մատաղ լինեմ, չեմ կարող բռնել. չեթիճուղը բաց թողնեմ, ջուրը վարար է, ինձ կտանի: Ողակ շինեք ու ենպես գցեք, վոր գոտկատեղս ընկնի: (Հեյդար-բեկը պարանն ողակ է անում ու նետում գեթը. ողակն ընկնում է Հաջի-Կարայի վիզը. Հաջի-Կարան յերկու ձեռքով քակից պինգ բռնած ու խեղդվելով գուրս է գալիս փքը, ջուրը վրայից օռնում է):

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Ինձ ես որին հասցնողի տունը քարուքանդ լինի, իմ դուքանից ինձ ավարա անողի տան դուռը հավիտյան փակ մնա:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Հաջի, ճանապարհին մարդու գլխի շատ բան կգա, չպետք է անհամբեր լինել: Խոսելու ժամանակը չի: Ես բոպելին կարող եմ մեզ վրա հարձակվել: Գետի փիղի շուտով պետք է հեռանալ, զամրաների մեջ թաքնվել, կեսգիշերին, չերբ մարդիկ բռն մտած կլինեն, պետք է ճանապարհ ընկնել: (Բոլորն

օտապ-օտապ ափից հեռացում եմ, այժից կորչում, ապա օտապ
ապառազիմած հայեր մյուս կողմից մոտ եմ գալիս)։

ՈՀԱՆ-ՅՈՒԶԲԱՇԻ.— (Հայերեմ) Իմ ղոչ Սարգիս, իմ ղոչ Կարապետ,
իմ ղոչ Ղահրաման։ Կանգնեք ինձ մոտ ու հրացաններդ պատ-
րաստ պահեք։ Յիւր նշան տամ, իսկույն արձակեք, խփեցեք։
Յեւ ձեզ անուն-անուն մուրդիցն ուզեցի։ Քանի դուք ինձ հետ
եք, թեկուզ հարյուր մաքսանենգ լինի, հախներից կգամ։ Ա՛յ,
մնացած տղերք, դուք մեր թիկունքում չեղեք ու մի վախենաք։
Աստուծով մեզ վոր տեսնեն, բռնները թողած կփախչեն։ Յեթե
չփախչեն, դիմադրեն, աստծուն ե հայտնի, ամենքին խուրդու-
խաշիլ կանեմ։

ՍԱՐԳԻՍ.—Ա՛յ յուզրաշի, նրանք վճիւր կողմից պիտի գան։

ՈՀԱՆ.—Մտիկ արա, մեր առաջից պիտի անցնեն։ Սուրհանդակը լուր
բերեց, վոր նրանք բացի ես ճամպից ել ուրիշ ճամպա չունեն
անցնելու համար։ Սարգիս, զգուշ կաց։ Աստված տա, բռնե-
րիցը ձեզանից ամեն-մեկին հիսուն մանեթ փեշքեշ կհասնի։

ՍԱՐԳԻՍ.—Ա՛յ յուզրաշի. ուրեմն բոլոր բռնները պիտի խլեմ։

ՈՀԱՆ.—Աստված գիտե, վոր նրանց խուրջիններն ել պիտի խլեմ։

ՍԱՐԳԻՍ.—Ա՛յ յուզրաշի, բա նրանք մեղք չեն։ Նսպես թե ենպես,
ղարաբաղցի չեն։ Թե մենք նրանց չպաշտպանենք, ել ռվ պիտի
պաշտպանի։ Պետք ե միջիչ ել նրանց բաժին թողնել, թե չե
նրանց անեծքը մեզ կբռնի։

ՈՀԱՆ.—Ա՛յ տղա, եդ ի՞նչ ես ասում. միթե մենք կողմնապահություն
պիտի անենք։ Յեթե կողմնապահություն անես, զարաբաղցիներ-
ին պաշտպանես, անեծքից վախենաս, ծառայության մեջ չես
կարող մնալ։

ՍԱՐԳԻՍ.—Յուզրաշի, ուզում եմ մի առաջ գնամ, տեսնեմ՝ գալիս
ե՞ն թե չե՞։

ՈՀԱՆ.—Լավ, զգուշ կաց, չվախեցնես, վոր լետ չփախչեն։

ՍԱՐԳԻՍ.—Ձե, նրանց աչքին ըսկի չեմ ել յերևա (հեռացում ե)։

ՈՀԱՆ.—Տղերք, զգուշ չեղեք (սկսում ե օտրոմ կանգնեցնել ճրանց,
ապա Սարգիսն ե վերադառնում)։

ՍԱՐԳԻՍ.—Յուզրաշի, տունդ կրակ ընկնի, զազախները գալիս են,
առաջներից գալիս ե բարձրահասակ, զենք ու զրահի մեջ կորած
մի յերիտասարդ. սարսափելի յե, աչքերիցն արյուն ե կաթում։

ՈՀԱՆ.—Ճիշտ ես ասում։

ՍԱՐԳԻՍ.—Աստված վկա, ճիշտ եմ ասում։

ՈՀԱՆ.—Ասա՛ դու մեռնե՛ս։

ՍԱՐԳԻՍ.— Դու մեռնես, լերդվում եմ գլխովդ:

ՈՀԱՆ.— Ծիշտ վոր վրան հրացան ու ատրճաճակ տեսար:

ՍԱՐԳԻՍ.— Աստված վկա, տեսա:

ՈՀԱՆ.— Ի՞նչ մարդիկ են:

ՍԱՐԳԻՍ.— Ընդամենը լերեք հոգի ելին, բայց են ջահելը վոչվոքի նման չեր:

ՈՀԱՆ.— Ըսկի յել վախ չունեմ, թող գան. բայց, Սարգիս, մենք շատ ենք առաջ կանգնել, եստեղ հենց մեզ վրա կարող են դուրս գալ: Յեթե միքիչ յետ կանգնենք, լավ կլինի, վոր զգուշ լինենք: (Փարզկացց յեա ե կացգնցնում. այդ ժամանակ բեկեբեց առջեվից, Հաջի-Կարան ու բարձած ձիերը լեռեվից մոտենում են, Հեյգար-բեկը հրացանը ձեռքից գցում եքոյորի առջեվից):

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Ե՛լ, ձիավորներ, ինչի՞ յեք ճանապարհը կտրել, դեն կացեք ճամպից:

ՈՀԱՆ.— Վա, ալ մարդ, ճամպից ինչ՞եւ պիտի դուրս գանք: Դու ո՞վ ես, վոր եղպես համարձակ խոսում ես:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Դռմալ, ճանապարհը կտրում եք. քեզ ինչ, թե յես ով եմ: Ասում եմ՝ դուրս յնկ ճանապարհից, թե չե փորդ ծխով կլցնեմ (հրացանը բարձրացնելով): Առ, գլադա, Ասկեր-բեկ, Սաֆար-բեկ, ի՞նչ եք կանգնել, կրակեցեք, թող շանաստակ լինեն:

ՈՀԱՆ.— (Ընկերներին ետեւ ցեղվում ե ցամաքից) Այ մարդ, դժվե՞ր ես, ինչ ե, դուր տեղը ինչ՞եւ յես ուղում արյուն թափել: Մենք քո ասած մարդկանցից չենք, վոր սպանեք:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Դռմալ, ուրեմն դուք ենպիսի իդիթներ եք, վոր ձեզ չի կարելի սպանել: Առ, յիկալ (Հրացանի փողը գետի ետ յե ուղղում):

ՈՀԱՆ.— Ա՛լ բալամ, դժուրթյուն մի անիլ. տես, մենք գնում ենք, դու յել քո ճամպով ուղիդ գնա. իսեր ասածո՞ծ, դուր տեղը արյուն մի թափիլ, մենք ձեզ հետ դորժ չունենք:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Դռմալ, քո եղ պարծենալու համար քեզ սաղ չեմ թողնիլ:

ՈՀԱՆ.— Հոգիս, յես պարծենալու համար չասացի, թե մենք քո ասած մարդկանցից չենք: Յես ուղում ելի ասել, վոր մեզ մուրոյն ե ուղարկել. վոր մեզ սպանեք, նրան ի՞նչ պատասխան պիտի տաք:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Դռմալ, քո ի՞նչ գործն ե, թե մուրոյին ինչ պատասխան կտանք, քննի՞չ ես, ինչ ե. դուրս յիկեք ճամպից, թե չե ես բոպելին ամենքիդ ել գյուլլախորով կանեմ:

ՈՀԱՆ.—Դնում ենք, դնում. ալ բալամ, մի նեղանաք: Սարգիս, Կարապետ, Դահրաման, յետ դարձեք, բալամ, դրանցից արլան հոսե զալիս:

ՍԱՐԳԻՍ.—Այ լուգբաշի, բա մուրոյին ի՞նչ տսենք:

ՈՀԱՆ.—Ա տղա, ի՞նչ պիտի տսենք. չե՞ս տեսնում, վոր սրանք դաշաղներ են, բա կանտրաբանդիստան եղպես կլինի: Կանտրաբանդիստաները մարդու շվաք են տեսնում թե չե, իսկուչն տալբանքը թողնում-փախչում են: Իսկ նրանք մեղ ել են ուզում թալանել ու սպանել: Են սարսաղ լրաբերն ել նրանց կանտրաբանդիստաների տեղ ե դրել, սուտ խաբար բերել:

ՍԱՐԳԻՍ.—Այ լուգբաշի, յեթե մուրոյը հարցնի, թե մարդու պատահել ենք, ի՞նչ տսենք:

ՈՀԱՆ.—Կատենք, վոր մենք կանտրաբանդիստաների չենք պատահել:

ՍԱՐԳԻՍ.—Իսկ ասե՞նք, վոր մենք դաշաղների պատահեցինք:

ՈՀԱՆ.—Ա բալամ, մեր ի՞նչ գործն ե վոր:

ԿԱՐԱՊԵՏ.—Ձե, յուգբաշի, տսենք, վոր մենք դաշաղների պատահեցինք, բայց նրանք շատ ելին, չկարողացանք հախնելից դալ:

ՈՀԱՆ.—Լավ, դրա մասին հետո կմտածենք, հիմա դնա:

ՍԱՐԳԻՍ.—Թող հարցնեմ նրանց, տեսնեմ՝ ղաչաղի ապրանք ունե՞ն թե չե:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Այ հայ, նորից յետ ես դառնում. աստված վկա, ձեր աջալն եկել ե: Յեթե յես ձեր հախիցը չզամ, դուք ետեղից չեք հեռանա: (Ետպի հայերն ե գնում. փախչելու ժամացակ Սարգսի գլխից փափախը վայր ե ընկնում):

ՈՀԱՆ.— Ա տղա, Սարգիս, դեսն արի, մեղ արինքի մեջ մի պցի:

ՍԱՐԳԻՍ.—Յուգբաշի, փափախս վեր ե ընկել, թող կուսնամ, վերցնեմ:

ՈՀԱՆ.—(Ձառացած) Ա տղա, թող մնա, յետ արի: (Սարգիսը վերագառնում ե. բոլորը գնում են):

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—(Ետաց լեռնավից) Ե՛յ, չերդվում եմ հորս գերեզմանով, յեթե վորեիցե տեղ տսեք, վոր մեղ տեսաք, բոլորիդ սուրը կքաշեմ, ձեր տանը որորոցի յերեխային ել սաղ չեմ թողնի:

ՈՀԱՆ.—(Հեռավից) Այ մարդ, եղ ի՞նչ ես ասում, չե՞ վոր մենք դատարկ ձեռքով չենք պատահել իրար: Մեր ի՞նչ գործն ե հայտնենք ձեր մասին: Դու ենպես ես կարծում, թե մենք ձեղ վրա՞ չեկանք. մենք հենց ենպես, հանաք արինք, ասացինք, թե մեզ մուրոյն ե ուղարկել, վոր տեսնենք, թե դուք ինչ եք ասում: Մենք հաղորդեցի լինք, յեկել ենք շահսեաններից գոմեշ առնելու. մեր առուտուրը գլուխ չեկավ, յետ ենք դառնում:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Լավ, դե դնացեք: (Հեյզար-բեկը զայրացած՝ վոսֆը գնահին ե խփում) Շուտ-շուտ գնացեք: (Հայերը փայերճին ա-
րագացնում եմ յեվ հեռանալով՝ ալիք չփանում. Հաջի-Կարան
առաջ ե գալիս, քնկերճերին մոտենում):

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Ա՛յ մարդիկ, եմ հայերին ընչի՛ բաց թողիք: Ինչի՛ ձեռ-
ները կապոտած՝ ես դամշուտի մեջ չգցեցիք:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Ինչի՛ համար, հաջի:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Նրա համար, վոր մեզ վրա չգան, զազախ չբերեն:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Ե՛, գոմեշ առնողն ինչի՛ պիտի նեղուիթյուն քաշի ու
մեզ վրա հարձակվելու համար զազախներ բերի:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Դու չես իմանում. նրանք, անկասկած, գոմեշ առնող-
ներ չեն. ինչպես կարելի չենրանց խոսքերին հավատալ: Զլսեցի՛ր,
թե Սափար-բեկն ինչ ասաց. Վերանք հարյուր ֆանդուֆիլ գիտեն:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Հաջի, յերաշխալորում եմ, վոր մեր ես ճամպորդու-
թյան ժամանակ ել նրանցից փաս չենք ստանալ:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Ա՛յ ուրա, եդ ի՛նչ ես ասում, միթե միայն ես
ճամպորդությունն ե. պետք ե նրանցից միքանիսին պատժել,
վոր սրանից հետո ել կոնտրաբանդիստի վրա չհարձակվեն: Յեթե
ամեն մի պատահողի սաղ-սալամաթ բաց թողնես, ել նրանց ձեռ-
քից ըսկի պրծնել կլինի՛, յերբ զաչաղի ապրանք բերելու գնաս:
Սրանից հետո ել ես տեսակ ոգտավետ ճամպորդությունից յետ
չպիտի մնամ: Յես քո յիտեն ելի կանգնել, քեզ վրա հույս դրել,
թե չե չես նրանց ձեռքիս զարբը ցույց կտայի, եդ անորեններից
ճանապարհը կմաքրեցի:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ.— Լավ, մի ուրիշ անգամ, յերբ պատահեն, ձեռքիդ զարբը
ցույց կտաս, հիմա անցածն արդեն անցել ե:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Աստված տա, դուք ել կլսեք. դե, քչեք, կանգնելու ժա-
մանակ չկա. պետք ե ես գիշեր Ղարզաբազար հասնենք: Ենտեղ
Բադալին ձեզ մոտ կթողնեմ, վոր Դյարամալու հետ Աղջարեդի
անցնեմ, ուրբաթ որվա բազարին հասնեմ, ապրանքը ծախեմ:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Հաջի, ենտեղից դենը բա մենակ կարճի ես անցնել:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Ենտեղից դենը հո ել զազախներ չկան:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Ղազախ չկա, բայց յեթե մուրոյի յասաուլներին պա-
տահես, եմ վախտը լավ չի լինիլ:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Յես ինքս եմ խնդրում աստծուց, վոր պատահեմ եդ
մուրոյի յասաուլին ե վրեժ լուծեմ:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Բարաքչալլան, հաջի, մաշալլան, բանից դուրս ե գալիս,
վոր դու շատ զոչաղն ես:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Թող իմ դիմը մեկ-յերկու լասաուլ դուրս գան, իս նրանց գլուխն են ոյինը դնեմ, վոր մինչև աշխարհի վերջը չմոռանան. դրանից հետո ժողովուրդը նրանց ձեռքից հանգիստ կ'մնա: Յեթե եղ լասաուլներից միքանիսի գլխին հարսանիք չսարքես, ես մահալը նրանց ձեռքից չի խաղաղվի:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Ի՞նչ լավ կլինի, հաջի, մենք ել քո քաջությունը կը-լսենք: (Սկսում են հեռաճալ, միմիջ անց՝ անհետանում են):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԺՈՂՈՒԹՅՈՒՆ

Չորրորդ գործողությունը տեղի յե ունենում խոնաշենի կիրճում: Յերկու հայ—մեկը հետեւակ, մյուսը իշով՝ գնում են:

ԱՌԱՔԵԼ.—Մկրտիչ, թե աստված տա, ես տարի ութսուն ջվալ ցորեն կունենանք:

ՄԿՐՏԻՉ.—Աստուծով կունենանք: Ես լերեք տարի չե, վոր ցորենը մո-րեխն ե ուտում. բայց աստված ես տարի ենքան ե տվել, վոր անցած տարիների տեղը կհանի:

ԱՌԱՔԵԼ.—Մկրտիչ, ի՞նչ լավ ե, ասում եմ, վոր անցած տարիներից հորերում ցորեն եր մնացել, թե չե՝ ես թանգության տարիքը շատ նեղութուն կքաշելիս:

ՄԿՐՏԻՉ.—Անպատճառ. մեր գլուղի ցորենը չլինեք, Դիզակի սաղ մահալը սովից կկոտորվեր:

ԱՌԱՔԵԼ.—Աստված բարաքյաթ տա հողագործությանը: Աշխարհումս դրանից լավ պարապմունք չկա:

ՄԿՐՏԻՉ.—Ձիու վոտի ձեն ե գալիս. կաց, տեսնենք՝ ով ե գալիս (Նաեց են առնում. առջեվից յերեվում ե Հաջի-Նաբաե):

ՔՅԱՐԱՄԱԼԻ.—Մեր տունը քանդվեց, աղա, առաջներիս յերկու մարդ ե յերևում. բա չես չառացի, թե ընկերներիցդ մի բաժանվի. ագահությունդ բռնեց ելի՛: Հիմա լավ կծախես ապրանքդ Աղշա-րեղու բազարում: Ես ե՛ կթալանեն:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Ա՛, գլադա, ի՞նչ ես ասում. ո՞վ պիտի սիրտ անի իմ ապրանքը խի:

ՔՅԱՐԱՄԱԼԻ.—Ա՛, տես, նրանք, վոր յերևում են: Մի առաջ արի, մը-տիկ տուր, անպատճառ մուրոյի լասաուլներն են:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Թե վոր աստված տա, նրանց ձեռքը ըսկի մի չոփ ել չի ընկնի, վոր աստիճանը մաքրեն: Դու բեռան վրա պինդ նըս-

տիր, մի վախենա, վալը չընկնես. լես առաջ գնամ, տեսնեմ՝ դրանց միտքն ինչ է: Կրճենեմ ու ձեռքները կապոտած՝ ձորը կգլորեմ: Մինչև վոր եղպես միքանխսներին ինձ ցույց չտամ, ես ճանապարհները հանգիստ չեն լինիլ: Թե վոր աստված տա, մի ենպես գործ կըռնեմ, վոր ել վոչվոք չհամարձակվի դաշաղի ապրանքի թամահ անի:

ՔՅԱՐԱՄԱՆԻ.—Յես բեռան վրա պինդ կմխվեմ: Յեթե մեկն ինձ վեր չգցի, ինքս վեր չեմ ընկնիլ:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Շատ լավ: (Գնում է դեպի հայերը հրացանը ձեռքին): Ե՛լ, ռժ եք, ասացեք, թե չե՛ խփեցի:

ՄԿՐՏԻՉ.—Ա՛յ ջանմ, ինչո՞ւ լես խփում: Մենք քեզ ի՞նչ ֆլասա ենք տալիս: Մենք ճամպորդ մարդիկ ենք:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Յավա-յավա մի խոսիր: Ես ճանապարհով շատ մարդ եմ անցնում: Տես, դուզն ասա, տեսնեմ ռժ եք. գիշերվա ես վախտը եստեղ ի՞նչ եք անում:

ՄԿՐՏԻՉ.—Մենք թողկցի լինք, գնացել ելինք մեր արտը հնձելու. հնձել-պրծել ենք, հիմա տուն ենք դառնում:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Եդ տեսակ խոսքերով ինձ չեք կարող խաբել: Յես ճանաչում եմ ձեզ, գիտեմ, թե դուք ով եք: Մինչև ձեզ յերկսիդ ել շիլուքյուլթ չանեմ, ես կողմերը ձեր ձեռքը չի հանդարտվի, գնացող-չեկողը ձեր ձեռքը չի ազատվի:

ՄԿՐՏԻՉ.—(Զարմանքով) Առաքել, ի՞նչ ես ասում սա:

ԱՌԱՔԵԼ.—Մի մարդավարի հարցրու, տես, թե միտքն ի՞նչ է, ի՞նչ է ուզում մեզանից:

ՄԿՐՏԻՉ.—Ա՛յ ախպեր, մենք թափավորի հպատակ, խեղճ մարդիկ ենք, մեր քյասիբուլթյունով մեր գլուխը պահում ենք: Մեր ոըումը վոչվոքի ֆլասա չենք տվել, վոչվոքի ճանապարհը չենք կտրել, վոչ ել բունթ սարքել: Ի՞նչ ենք անում, վոր յերկիրը մեր ձեռքը չի հանդարտվում:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Յես ձեր խորամանկությունը լավ եմ իմանում: Յեթե դուք «դուզ» մարդիկ լինեիք, ես գիշեր ժամանակն եստեղ չեիք յերկալ: Ձեր միտքը միշտ են է, վոր խալխին ֆլասա տաք, խալխի տունը քանդեք: Հրացաններդ վեր դրեք, թե չե կսպանեմ:

ՄԿՐՏԻՉ.—Ա՛յ ջանմ, հրացան վճրաեղից ե, վոր վեր դնենք: Բացի յերկու գերանդուց՝ ուրիշ բան չունենք: Թե միտքդ մեզ թալանելն է, ասա:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Յես թալանչի չեմ, լես ձեզ նման ուրիշի ապրանքին թամահ անողների հոգեհանն եմ:

ԱՌԱՔԵԼ.—Մկրտիչ, եղ ի՞նչ տեսա՛լ դաշաղ ե, գրա ասածներինցն ըսկի մի բան չեմ հասկանում:

ՄԿՐՏԻԶ.—Յես ել. սոս կաց, մի խոսի, տեսնեմ ի՞նչ ե ասում: (Գառնալով գեպի Հաջիճ) Ախպեր, մենք վոչվորի ապրանքի վրա աչք չունենք: Մենք գյուղացի մարդ ենք. փառք ասածու, թագավորին խարջ ու թալլջի լինք տալիս, բեկլառի լինք գնում: Մեղանից, ինչքան մեր ուժը կպատի, խալխին ոգուտ ե հասնում: Ես ձմեռ թանգուլթյանը մեր հարևան թուրք գյուղերին հաց փոխ տվինք, վոր սովից չմեռնեն: Թե վոր մինչև որս թողլուն մեկի կոպեկը կերած լինի, մեր արյունը քեզ հալալ ե:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Ձեր արյունը վաղուց ե հալալ, բայց մինչև որս դեռ թափող չի լեղել: Հիմա ձեր «աջալը» յեկել ե, վոր ինձ եք պատահել: Ուրիշին փոս փորողն ինքը մեջը կընկնի»: Շատերի տունն եք քանդել: Հիմա ձեր պատիժը պիտի ստանաք: Վեր դրեք ղենքերդ, թե չե, աստված վկա, ես բոպիլին հրացանը ձեր սրաին կդատարկեմ: (Հայերը վախեցալ եճ սկսեւո):

ՄԿՐՏԻԶ.—Այ ախպեր, յերկինք-գետինք, մեր ձեռին զենք չկա: Վերջապես մենք ի՞նչ մեղք ունենք, վոր մեզ վրա եղպես նեղանում ես:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Ձեր մեղքին վոչ յերկինք, վոչ գետինք տեղ չի անի, չի տեղավորվի, դուռումսաղի տղերք, արհեստը գլխներինդ կտրվի՛լ ե, ի՞նչ ե:

ՄԿՐՏԻԶ.—Ա՛յ ջանմ, աշխարհում մեր արհեստիցը լավ արհեստ չկա: Մեր արհեստը չլինի, ժողովուրդը հաց չի ճարի:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Տես, տես, գրա համարձակությանը մտիկ արա, հալալը արհեստն ե գովարանում. դռմալի տղա, ժողովուրդը նեղություն ե քաշում, իր ճակատի քրտինքով մալ վաստակում, դուք մուֆթա նրան տեր եք դառնում: Եղ վճռեղ ե տեսնված:

ՄԿՐՏԻԶ.—Ա՛յ ախպեր, աստվածդ սիրես, մեզ մի չարչարիլ, թող անց կենանք, դուրս գանք, գնանք, հանաքի ժամանակ չի:

ՀԱՋԻ ԿԱՐԱ.—Աստված վկա, թե մի վոտ փոխեք, ջամգաքներդ գետնին փռված իմացեք: Իմ խոսքը հանաքի տեղ եք գնում. միտքներդ են ե, վոր ձեզ պես հիմարներից խաբկեմ, մոտ դաք ու ձեր իմացածն անեք: Վեր գցեք ղենքերդ, ասում եմ:

ՄԿՐՏԻԶ.—Առաքել, ի՞նչ անենք:

ԱՌԱՔԵԼ.—Աստված վկա, չես ել եմ մնացել զարմացած:

ՄԿՐՏԻԶ.—Տեր աստված, ես ի՞նչ փորձանքի մեջ ընկանք: Ա՛յ ջանմ, թե չես թողնում, վոր առաջ գնանք, դե թող, վոր յես դառնանք, մի ուրի ճանապարհ գտնենք, գնանք:

ԿԱԶԻ-ԿԱՐԱ — Հեշ չի կարելի. տեղներէցդ չպիտի շարժվեք: Ձեր միտքըն են ե, վոր գնաք իմաց տաք մուրոյին, գա ինձ վրահարձակվի: Աստուծով ձեր մահվան խաբարը մուրոյին կհասնի, հետո ել ձեր ֆաշցած ընկերներն համար դաս կլինի:

ՄԿՐՏԻԶ. — Այ ջանմ, դու մեզ համ տեղ ես դնում. եղ ի՞նչ խաղ ե, վոր խաղում ես մեր գլխին:

ՀԱԶԻ-ԿԱՐԱ. — Դուք ավազակներ եք, ճանապարհ կտրողներ, ժողովրդի տուն քանդողներ, չարագործներ, մուսթթախոռներ, կախաղանի արժանի մարդիկ:

ՄԿՐՏԻԶ. — Բա դժ ով ես:

ՀԱԶԻ-ԿԱՐԱ. — Եդ խոսքերը մի սև փող չարժեն: Իմ վերջին խոսքն ե. ինձ յետ մի պեք, շուտ արեք, զենքերդ վեր դրեք:

ՄԿՐՏԻԶ. — (Սառսառելով) Ի՞նչ անենք:

ԱՌԱՔԵԼ. — Աստված վկա, զենք չունենք, յերկու գերանդի ունենք, ուղում ես, վեր պցենք: (Գերանգրկեց զեպի հաջիք եւ ցնուր):

ՀԱԶԻ-ԿԱՐԱ. — Ձեր հրացաններն, ատրճանակները և թրերը վեր գրցեք, թե չե կրակում եմ:

ԱՌԱՔԵԼ. — Այ ջանմ, եղ ի՞նչ մարդ ես դու. յերդվում եմ աստուծով, յերդվում մարգարեով, վոր հրացան ու ատրճանակ չկա:

ՀԱԶԻ-ԿԱՐԱ. — Ձեմ հավատում, սուտ եք ասում, պահել եք, վեր պցեք:

ՄԿՐՏԻԶ. — Դե վոր չես հավատում, դու գիտես, ինչ ուղում ես, արապատիժ թող աստված տա:

ՀԱԶԻ-ԿԱՐԱ. — Դե հիմա կտեսնեք, թե ինչ պետք ե անեմ: (Գլուխներից բարձր կրակում ե, եօք խոցում ե. Սառսառել վախից եօից վայր ե ընկնում: Սյգ ժամանակ Հաջի-Կարան ասոցանակը հանելով՝ ցրաց վրա յե հարձակվում գողալով): Տեղներէցդ չշարժվեք: (Խեղճ հայերից մեկն ընկած, մյուսը վոսթի վրա):

ՄԿՐՏԻԶ. — Մարդ աստուծո, ինչի՞ համար ես զուր տեղը մեզ սպանում:

ՀԱԶԻ-ԿԱՐԱ. — Չշարժվեք: (Դեպի Քյարամալիք զառնալով) Ա՛ դյաղա, Քյարամալի, չես սրանց բռնեցի, փախիր, վոր ազատվես:

ՔՅԱՐԱՄԱԼԻ. — Այ աղա, առաջ փախչեմ, թե յետ:

ՀԱԶԻ-ԿԱՐԱ. — Այ, անխելքի տղա, անխելք, յետ հար պիտի փախչես. Արազին դեմ կառնես, կարող եմ անցնել. դեպի առաջ փախիր, շուտ արա:

ՔՅԱՐԱՄԱԼԻ. — Չասացիր. ի՞նչպես, բռնել հիտա փախչեմ:

ՀԱԶԻ-ԿԱՐԱ. — Թչու, անխելքի տղա, անխելք: Իհարկե, առանց բռնի ի՞նչպես փախչես:

ՔՅԱՐԱՄԱԼԻ.— Յես ել եղպես գիտեմ: (Մտնալով և ձիուն, ալիք
անհետանում: Այդ ժամանակ Սուրբն ուզում է վոսի կանգ-
նել):

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— (Բարձր ձայնով) Ե՛յ, տեղիցդ չշարժվես, թե չի կսպա-
նեմ: (Սուրբնը նորից պառկում է գետնին. այդ ժամանակ
մուրոյն իր մարդկանցով մոտենում է):

ԽԱԼԻՆ ՅՈՒԶԲԱՇԻ.— (Մուրոյին) Ա՛յ աղա, հստեղ են, դատա, յեկեք:
ՄԿՐՏԻԶ.— Ձեր գլխովը պտույտ գամ, չեկեք ազատեցեք մեզ ես չա-
րագործի ձեռքից:

ԱՌԱՔԵԼ.— (Վոսի կանգնելով) Ե՛յ, յես ձեզ մատաղ, Յեկեք, ազա-
տեցեք մեզ ես դաշտի ձեռքիցը:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Ձեր գլխովը պտույտ գամ, ով ել վոր լինեք, յեկեք,
սրանք իմ ահու չեն կարողանա տեղներից շարժվել: Սրանց ձեռ-
ները կապկպեք, պահեք, վոր յես հեռանամ: (Այդ ժամանակ
մուրոյն իր մարդկանցով օջապատում է նրանց):

ՄՈՒՐՈՅ.— Հարաձգադաներ, իմ ձեռքից չեք պրծնի, ձեր մասին յես
տեղեկություն ստացա, ձեր յետեիցն եմ չեկել: Խալիլ յուզբաշի,
բաց մի թողնիր:

ԽԱԼԻՆ ՅՈՒԶԲԱՇԻ.— (Դեպի հայերն առաջ գալով) Աստված վկա, իե
տեղներիցդ շարժվեք, բոլորիդ ել կսպանենք. դենքերդ ցած դրեք:

ՄԿՐՏԻԶ.— Ե՛յ, գլխներովդ պտույտ գանք: Մենք դաշտ չենք: Սրանք
մեզ վրա հարձակվեցին (ցույց օալով Հաջի-Նարային, Խալիլ
յուզբաշին գիմում է Հաջի-Նարային):

ԽԱԼԻՆ ՅՈՒԶԲԱՇԻ.— Ե՛յ, տեղիցդ չշարժվես, հրացանդ ցած դիր:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Ա՛յ աղա, յես մի հանգիստ, խոնարհ, քյասիբ մարդ
եմ, ճանապարհին իմ առաջը կտրեցին և թալանիլ ուզեցին: Յես
աշխատեցի, վոր ինձ չթալանեն:

ՄՈՒՐՈՅ.— Խալիլ յուզբաշի, հրամայիր, վոր բոլորը զենքերը դնեն,
հետո մեղավորը կհայտնվի:

ՄԿՐՏԻԶ և ԱՌԱՔԵԼ.— Ա՛յ աղա, աստված վկա, մենք զենք չունենք,
ուզում եք, մոտ յեկեք, տեսեք:

ԽԱԼԻՆ ՅՈՒԶԲԱՇԻ.— (Հաջի-Նարային) Այ մարդ, մուրոյը հրամա-
յում ե, վոր հրացանդ ցած դնես:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Ա՛յ գլխովդ պտույտ դամ: Մուրոյն ետեղ է: Բաշուս-
տա, ահա վեր գցեցի: Հոգիս ու կարողությունս մուրոյին փեշ-
քեշ, բայց նրանք սուտ են ասում, իրենց զենքերը թազցրել են:
(Ձեռքերը ցած է զնում, հետո Մուրոյն իր մարդկանցով մոտե-
նում է Հաջի-Նարային):

ՄՈՒՐՈՅ.— Այ մարդ, չես քեզ չերեք գիշեր և փնտռում եմ. Սալիլ յուզբաշի, դրա ձեռները կապիր: (Խալիլ յուզբաշին Հաջի-Կարայի ձեռները կապում է):

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Ա՛ գլխովդ պտույտ դամ, իմ մեղքը վո՞րն է:

ՄՈՒՐՈՅ.— Շատ մի խոսիլ, ընկերներդ տեղն առա, թե չե քեզ կա խաղան կհանեմ:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Աղա, ինչո՞ւ չես հրամայում ինձ կախ տալ, չես դաշաղ չեմ, ճամպա կտրող չեմ, ճանապարհ կտրող զաչաղին են կախադան հանում:

ՄՈՒՐՈՅ.— Խնչպես թե դու զաչաղ չես: Ուրեմն՝ դու ելլեսցի հայերին թալանող և մետաքսը տանողները ընկերներդ չես:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Այ աղա, գլխովդ պտույտ դամ, չես մի խեղճ մարդ եմ, իմ արհեստը սովորաբար ութշունն է, մարդ թալանել չգիտեմ:

ՄՈՒՐՈՅ.— Ե՛, վոր հդպես ե, բա զենք ու զբանով հսպիսի գիշերին հատեղ թնչ ես անում: Շիտակ մարդն հատեղ թնչ գործ ունի: Ա՛յ տղերք, սրան պինդ պահեցեք, տեսնեմ ես մարդիկն ով են. (յերեսը գեպի հայեր գարձեցելով) Այ մարդ, դո՞ւք ով եք:

ՄԿՐՏԻԶ.— Քե մատաղ, մենք թողլեցի խեղճ հնձվորներ ենք, արտիցը տուն դառնալիս եզ մարդը մեզ բռնեց ու բաց չթողեց. չեթեղու հասնեցիր, մենք սրա ձեռին բանտարկված կմնալինք:

ՄՈՒՐՈՅ.— (Հաջի-Կարային) Այ մարդ, դո՞ւ չես սրանց բռնել հատեղ:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.— Յես սրանց չեմ բռնել, եզ սալ համար թող աստված սրանց տունը քանդի, գլխովդ պտույտ դամ, սրանք ճանապարհն կտրեցին, ուզում էյին ինձ թալանեն:

ՄԿՐՏԻԶ.— Աղա, սուտ ե ասում, դա չեր մեզ թալանել ուզում:

ՀԱՋԻ ԿԱՐԱ.— Դրանք շատ խորամանկն են, աղա, մի հավատա դրանց: Դրանք ասում եյին, իբր թե ձեր յասաուլներդն են, հիմա իրենց խոսքն ուրանում են:

ՄԿՐՏԻԶ.— Այ աղա, աստված վկա, եզ մարդը սուտ ե ասում, նրա խոսքին մի հավատա. մենք են գլխից ասացինք, թե թողլեցի հնձվորներ ենք. աղաչանք-պաղատանք արինք, վոր մեզանից ձեռք քաշի: Մի ընկեր ել ունի, փախավ:

ՄՈՒՐՈՅ.— Սալիլ յուզբաշի, դե արի հասկացիր, թե ով ե սրանցից ճիշտն ասում: Սատանան ել սրանցից բան չի հասկանա. ո՞վ գիտե, թե ինչ մարդիկ են: Յերեքին ել վերցրեք, եկուց նաչալնիկի մոտ պնացեք ու ցույց տվեք. քննութուն կլինի, ինչ վոր կհրամայի, են ել կանհնք (Խալիլ յուզբաշին ամենհինգ ձեռքակալում է):

ՀԱՋԻ-ԿԱՐԱՆ.—(Յկտում ե լաց լինել) Տունդ քանդվի, իմ տուն քանդող, արյուն չեմ բերես, ինձ արլան մեջ գցող, անհավատ մեռնես, ինձ ես փորձանքի մեջ պցող: Յես վորտեղ, զիվանը վորտեղ. քննությունից հեռու ելի փախչում, ելի քննության տակ ընկա. Ագամ-Յեվայից պիտի սկսեն հարցուվորձ անել, զնա ու հաղար ու մի գտտարի հարցերի պատասխան տուր, սպասիր, թի փերջ պիտի լինի:

ՀԱՅԵՐԻՅ ՄԵԿԸ.—Ա մարդ, տեսնեմ՝ չերեսդ ծիծաղ չգա, սիրտդ չուրախանա, վոր մեզ դուր տեղն ես փորձանքի մեջ գցեցիր: Ո՞վ գիտե, թե քննությունից չերբ պիտի ազատվենք: Ռսի քննությունը հինգ տարում չի վերջանա. մեր արտերն ռվ պիտի հնձի, մեր կալերն ռվ պիտի կալի, ախ, ախ...

ԽԱԼԻԼ ՅՈՒՋԲԱՇԻ.—Այ մարդիկ, քիչ խոսեք, հայդե, առաջ, (Բռնորդ գնում եմ):

Վ. Ա. Ր. Ա. Գ. Ո. Ի. Յ. Ր.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Հինգերորդ գործողությունը կատարվում ե ոբայում: Հեյ-դար-բեկը նստած ե վրանում: Հարսանիք ե. դուրսը գուռնա-դավալն ե նվագում. ջահելները սլարում ու յերգում են:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Ալլահ, փառք վողորմությանդ: Տեսնես յերազ ե, թե իսկապես քեզ հետ նստած եմ դեմուդեմ: Յերկու տարի քո դարդը սրտումս, չոլերումս եյի որերս անցկացնում. վերջիվերջո նըպատակիս հասա. չգիտեմ, թե իմ ես բախտի համար ինչպես շընորհակալ լինեմ:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—Հեյդար բեկ, ասածու սիրուն, սրանից հետո ել մանգալու չգնաս: Աստված վկա, ել քեզանից բաժան ապրելու համբերություն չունեմ: Աստված չանի, թե գլուխդ մի փորձանք գա, կամ զաչալ ընկնես, կամ թե չե քեզ բռնեն. ես աշխարհումս ել սաղ չեմ մնա: Սրանից հետո քեզ մի որ վոր չտեսնեմ, կսեռնեմ:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Միամիտ կաց. ալան-թալանի, գողություն չեմ գնալ: Նաչալիկն ել ինձ իրան բերնովը խրատ տվեց: Բայց մի ոգուտի ճանապարհ ենք գտել, ասածով դու յեկ հակառակ չես լինի:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—Ասա, տեսնեմ՝ ինչ գործ ե:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Ինչպես գիտես, հինգ որ սրանից առաջ քեզ ասացի վոր Հաջի-Կարալից փող հնք վերցնելու և դնալու լինք զաշաղի ապրանք բերելու, են ժամանակ դու հոժար չիլիր, հիմա ոգուտը տեսար. գնացինք բերինք, մի որում Ղարդարազարում ծախեցինք, մալան Հաջի-Կարալի տղին տվինք, ոչուտը բերինք, յեկանք. ընկերներս ել ես անգամ իրենց փախ ինձ տվին: Տասն որվա մեջ ծախս քաշեցի, հարսանիք արի, վոնց վոր խալխի սովորութունն և, ու քեզ իմ տունը բերի: Յեթն քո խոսքին ականջ դնելի, գնացած չպիտի լինելի, քեզ պիտի փախցնելի, կամ թե չե հորդ տանը պիտի մնալիր:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— Բա ասում են՝ չե՞ն թողնում, գնացող-բերողին պատժում են:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Իհարկե, թմրած մարդկանց միշտ բռնում են, ապրանքը ձեռիցն առնում են, իրեն ել պատժում: Բայց ինձ ո՞վ կարող և մոտենալ:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— Ուրեմն քո առաջը կտրող չեղավ:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Ինչ՞եւ չե, տաս հոգի միանգամից դուրս լեկան, յետ ածեցի, բոլորը փախան, գնացին:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— Այ ամման, Հեյդար-բեկ, եղ ել «խաթալու» դործ ե լերկում, Դուզն ասած, յես դրան հոժար չեմ: Հաջի-Կարալին լես իմաց կտամ, վոր ձեզ սրանից հետո ել փող չտա, չխաբի ձեզ, իրա հետ տանի: Աստված վկա, վոր եղ մասին միտք եմ տնում, սիրտս դող ե ընկնում:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Աղջի, ի՞նչ կա, վոր սիրտդ դող ե ընկնում: (Փոքախաճումի՞ն գրկելով յերեսը համբուրում է): Ա՛ քե մատաղ, բա ի՞նչ անեմ, քեզ ինչո՞վ պահում:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— (Փկսում է լալ) Ձեռք քաշի, եղ գործիցն ել ձեռք քաշի: Իմ հոր տանից բերած բաժինքովը մի տարի լավ կապրենք, հետո թե մի լավ գործ չճարես՝ դու ղիտես:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Դե, թող մի-յերկու անգամ ել գնամ, ընկերներին պարտքը տամ, հետո կասես՝ ել չեմ գնալ:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— (Լալով) Ըսկի մեկ անգամ չեմ թողնի, կես անգամ ել չեմ թողնի. թող ընկերներդ սպասեն:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Ղերջապես մեր պայմանն ենպես ե, վոր չեթե լես չըգնամ, իրենց փողն առանց սպասելու լես պիտի պահանջեն:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— Եղ քո գործը չե, լես մոլս կիսդրեմ, հորս հետ կխոսի, հերս նրանց կհանգստացնի:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Լսով, բայց յես ըսկի չեմ իմանում, թե դու ինչից ես վախենում:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— Վախենում եմ, վոր ելի անունդ մեջտեղ ընկնի, քեզ խաթալու դործի մեջ զցեն, որս սևանա:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Զուր տեղը կասկած մի անի, եղպես բան յերբեք չի պատահի:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.— Ի՞նչ անեմ, վոր հանդատանալ չեմ կարողանում: Սիրտս տերևի նման դողում է: Դիտեմ, քեզ ելի ձեռիցս պիտի խլեն: (Այդ ժամանակ Հաջի-Կարայի կիցը՝ Թուրքը ճեռս է մտնում):

ԹՈՒՔԵԶ.— Ա գլխովդ պտույտ գամ, մարդուս ի՞նչ արիք, մարդուս գլխին ի՞նչ փորձանք ե չեկել, դուք ամենքդ չեկել եք, իսկ չա՛ վոչ ինքը կա, վոչ նոքարը:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Ա կնիկ, դեռ մինչև հիմա չի չեկե՞լ:

ԹՈՒՔԵԶ.— Ձե, վերջապես ես ձեր արածն ե մարդուն խաբեցիք, տարաք, բան ու դործից ավարա արիք: Դուցե մահու բերան եք տվել: ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Ա կնիկ, մի վախենա, տեսնես վոր գլուղումն ե յետ ընկել. կդա, կերեա, մի վախենա:

ԹՈՒՔԵԶ.— Դյուղերում յետ չեր ընկնի: Թե վոր գլուխը վրան լինի, հիմա չեկած կլինի. յես իմ մարդուն ձեղանից կուղեմ: Ինչպես վոր տարիլ եք մարդ էս, ենպես ել յետ տվեք:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Զուր ես մեղ մոտ չեկել: Մարդդ անչափահաս չերիտա չե, վոր խաբեկինք, տանեկինք: Մենց նրան մի առաջարկութուն արինք, իրա ոգուտը հաշիվ արեց, մեզ միացավ ու չեկավ: Ամեն տեղ նրան պահպանելով՝ վտանգավոր տեղերով ու ճանապարհներով անցկացրինք: Ել ուրիշ ի՞նչ կարող ենք անել, չեթե չի չեկել: Դուրս արի գնա, գլուխս մի ցավացնի:

ԹՈՒՔԵԶ.— Կգնամ մուրոյին ու նաչալնիկին դանդառ կանեմ. մարդուս դուք կորցրիք: (Այդ ժամանակ աղմուկ է բարձրացում: Մուրոյը լեզ գավառապետի իրենց մարդկացեցով օջապատում են վրացը):

ՄՈՒՐՈՅ.— Մեղավոր կա թե վոչ, միայն թե նաչալնիկն ասում է՝ «Հեղար-բեկը թող տեղից չշարժվի»:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— (Ընդառաջելով) Մուրոյ, նաչալնիկի միտքն ի՞նչ ե, թող շնորհ բերի տեսնեմ. եստեղ մեղավոր մարդ չեմ, վոր նրանից փախչի:

ՄՈՒՐՈՅ.— Մեղավոր ե, թե չե, միայն թե նաչալնիկն ուզում է Հեղար-բեկին տեսնել:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ. — Հեյդար-բեկը յես եմ, ձեզ ինչ ծառայութիւն կարող եմ անել, հրամայեցեք:

ԳԱՎԱՌԱՊԵՏ. — (Պառաջանալով) Հեյդար-բեկ, դու իմ խրատները չըսեցիր, ելի վատ գործի մեջ ընկար: Հիմա ինձ հետ միասին Ղալա պիտի գնաս: (Սոճա-խաճումը գողալով սկսում է լալ):

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ. — Նաչալնիկ, դու ինձ հրամայել ես գողութեան և դաշադութեան չգնամ. թե վոր խոսքիցդ դուրս չեկած լինեմ, իմ տեղը Սիրիւն ե:

ԳԱՎԱՌԱՊԵՏ. — Հա, դուրս ես չեկել: Տասն ու սրահից առաջ: Արագից միքիչ վեր ելլեսցի հայերին թալանել, արեւելումը ձեռներիցը խել ես: Ամենից լալիւ եմ ե, վոր, պատիժդ թեթեալներու համար, վիզ առնես և ընկերներդ տեղն ասես:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ. — Նաչալնիկ, դու ասում ես, վոր եզ գործը պարզ գործ ե, բայց չես վոչ մի մարդու չեմ թալանել. յեթե մի մարդ եզ խոսքն իմ յերեսին ասի, իմ արշունը քեզ հալալ ե:

ԳԱՎԱՌԱՊԵՏ. — Լաւ. խալիլ յուզբաշի, եմ հայերին հետեղ կանչի: (Խալիլ յուզբաշին Ոհան յուզբաշուն իր խմբի հետ առաջ է բերում):

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ. — Նաչալնիկ, ամեն մի եղպես ռամիկ մարդու խոսքին մի հավատա, ինձ մի անբախտացնի:

ՈՂԱՆ. — Գլխովդ պտուլտ դամ, չես ըսկի յիլ ռամիկ չեմ, չես քսան տարի չե, ինչ «քոխվա» չեմ, քսան գովասանական թուղթ ունեմ: Անցած տարի ինձ համար արծաթե մեդալ բերել տվին. վերջրեք ես թղթերն ու կարգացեք, կտեսնեք (թղթերը ցույց տալով):

ԳԱՎԱՌԱՊԵՏ. — Յես ժամանակ չունեմ քո ծառայութեան վերահասու լինելու. տեսած բանդ ասա:

ՈՂԱՆ. — Գլխովդ պտուլտ դամ, բեկութեան համար ել վկայական ունեմ, առեք, կարդացեք. (գրպանից վկայականը հանելով՝ գալառապետին է պարզում):

ԳԱՎԱՌԱՊԵՏ. — Այ տղա, խոսքդ ասա, աղնվական լինելդ հետո կապացուցես:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ. — Նաչալնիկ, հարցուր եղպես վկայականը մի մանկի չարժե, կասկածելի ծագում ունեցող մարդիկն են իրենց համար վկայական պատրաստում:

ՈՂԱՆ. — Յեթե եզ խոսքը վոչ թե նաչալնիկի մոտ, այլ մի ուրիշ տեղ ասած լինեյիր, ես հրացանով քեզ ջուղար կտայի. (ձեռքը գնդի հրացանն է հանում. գիմելով գալառապետին) գլխովդ պտուլտ

զամ, վերջին մարդահամարի ցուցակի մեջ յես բեկ եմ գրված, հիմա նա ուզում է իմ բեկութունը ջուրը գցի. ենպես արտ, վոր յես չանբախտանամ:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.— Հիմա կհրամայեմ, վոր քեզ հիսուն ճիպոտ տան, են ժամանակ բեկութունդ խալառ կմոռանաս, չեթե իմ հարցին պատասխան չտաս: Յես հարցնում եմ քեզ, սա չե, վոր պատահել է ձեզ:

ՈՂԱՆ.— Գլխովդ պտույտ զամ, սա իր քսան ընկերների հետ մեզ վրա թուր ու հրացան քաշեց: Նրանք ձիավոր ելին ու գինված: Մենք միայն տասը հոգի ելինք. չեթե նրանք մեզնից ավելի շատ չլինեյին, մենք նրանց կբռնեյինք. հենց վոր մեզնից հեռացան, գնացին Ելիսի հայերին թալանեցին:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Նաչալնիկ, դրա ասածները բոլորը զրպարտութուն ե: ԳԱՎԱՌԱՊԵՏ.— Թուրք ցեղն ամբողջովին ստախոս է, դու չե՛ կդ ցեղիցն ես: Ձեր խոսքին դժվար է հավատ ընծայել: Մի գինված թուրք չերկու թողլիցի հայերի բռնել՝ թալանել է. հիմա ավաշկարա սուտ է ասում, իբր թե հայերն են ուզեցել իրան թալանել:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Ձգիտեմ, թե եդ մարդն ով է. յես Ղարարաղի բոլոր լավ ու վատ մարդկանց ճանաչում եմ. վոր տեսնեմ, կիմանամ՝ ճշմարիտ է ասում, թե սուտ: Գլխովդ չերգվում եմ, վոր ճիշտ եմ ասում:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.— Սալիլ յուզբաշի, են բռնած մարդուն ետեղ բեր (Սալիլ յուզբաշին Հաջի-Կարալին մոտ է բերում): Ասա տեսնեմ, ով է սա, ի՞նչ մարդ է:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Նաչալնիկ, յես սրան ճանաչում եմ. յերգվում եմ զըլխովդ, վոր սա մարդ թալանող չի, հայերը սուտ են ասել:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.— Սալիլ յուզբաշի, հայերին բեր այստեղ (Սալիլ յուզբաշին բողբոջի հայերին է մոտ բերում): Հեյդար-բեկ, ահա թե ինչու խոսքիդ չեմ հավատում: Վերջապես ինքդ միտք արա, այս հայերը մարդ թալանող են. բայց այս մարդն ասում է, վոր ուզում էյին դրան թալանել:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Եդպես չի, եդ մարդն ել է սուտ ասում:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.— (Զայրացած) Ուրեմն ի՞նչ պիտի լինի: Պարզ է, վոր ամենքդ ել սուտ եք ասում. ամենքդ ել պատժի արժանի չեք. յես պետք է քեզ տանեմ:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Քո կամքն է (Սոցա-խանուսը գողալ է սկսում):

ԳԱՎԱՌԱՊԵՏ.— (Հաջի Կարալին) Այ մարդ, դու այս հայերին ինչո՞ւ բռնեցիր:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Գլխովդ շուռ տամ, յես մի առևտրական մարդ եմ, ճանապարհ կտրեմ իմ գործը չի, միշտ առուտուր եմ անում: Թագավորին մեծ ծառայություն եմ արել:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.—Թագավորին ի՞նչ ծառայություն ես մատուցել, այ մարդ:

ՀԱՋԻ ԿԱՐԱ.—Գլխովդ պատույտ դամ, աղա, տասնհինգ տարի չե, ինչ թագավորական մաքսատանը տարեկան հիսուն թուման ոգուտ եմ տալիս:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.—Ո՛ր, բանից դուրս ե գալիս, վոր դու մեծ ծառայություն ես մատուցել ե, իսկապես, մեծ շնորհի չես արժանի:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Վա՛յ, գլխովդ պտույտ դամ, իմ եղ ծառայության համար յես վոսկի մեղալ պիտի ստանամ, թե չե ինչ...

ԳԱՎԱՌԱՊԵՏ.—Ո՛ր, քեզ պես ծառայություն մատուցող շատերը կան: Ձեր տված փողով պետք ե վոսկի մեղալներ շինել տանք, ելի ձեզ վերադարձնենք: Դատարկ-դատարկ մի խոսի, աստ, ես հայերին ինչո՞ւ եյիր բռնել:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ.—Գլխովդ պտույտ դամ, դրանք եյին ինձ բռնել:

ՄԿՐՏԻԶ.—Մատաղ լինենք քեզ, սուտ ե ասում. դա յիւր մեղ թալանել ուղում: (Փյզ ծամաճակ Զիվաճեի մուրօյի աստուլը մոտեցնում ե):

ՅԱՍԱՌԻԼ.—(Գաժառագեսիճ) Աղս, մեր մուրօյը եյլիսցի հայերին թալանող զաչաղներին բռնել ե, արբեշումը խել, իրենց ձերբակալել, ինձ ել ուղարկել ե ձեզ ասելու, վոր գործի եյուր թյունը զրավոր կհայտնի:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.—Յերեի ելի թուրքեր են:

ՅԱՍԱՌԻԼ.—Այո:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.—Թե չե, կարծում եյիր, թե անգլիացիներ կամ ֆրանսիացիներ են:

ՈՀԱՆ.—Գլխովդ պտույտ դամ, զաչաղները միշտ թուրքերից են լինում, մեզանից չերեք զաչաղ չի լինում:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.—Ձեռք կտրիր, դրա պատճառը վոչ թե ձեր ուղղամիտ լինելն ե, ալ վոր սիրտ չեք անում ու չեք կարողանում:

ՅԱՍԱՌԻԼ.—Աղս, մուրօյն ելի մի զաչաղի ապրանք բերող ե բռնել, բուր հետն ուղարկել ե (Հաջի-Կարաճ գունճագում ե):

ԳԱՎԱՌԱՊԵՏ.—Ո՛ւր ե, եստեղ բերեք:

ՀԵՅԴԱՐ. ԲԵԿ.—Նաչալնիկ, հիմա ձեզ հայտնի յեղավ, վոր չես զաչաղ չեմ:

ՈՀԱՆ.—Աղս, են բռնված զաչաղներն անկասկած դրա ընկերներն են:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.— Իրողութիւնը պարզվում է: (Մեզ ժամանակ յասանուր Քյարամալուն մոտ է բերում. Հաջի Կարան ցրան անունով է քն չե, վա՛յ կանչելով ուժաքափվում է):

ԳԱՎԱՌԱՊԵՏ.— (Զարմամբով) Ես ի՞նչ բան ե. ես մարդն ինչո՞ւ ուշաթափվեց: Ուշքի բերեք սրան, տեսնեմ: (Մուրացը ցուր է անում. Հեյդար-բեկը լեզու խալիլ յուզբաճիճ ցրա մարմինն են ցորում. Հաջի Կարան աչքերը բաց է անում):

ԳԱՎԱՌԱՊԵՏ.— Այ մարդ, ի՞նչ պատահեց քեզ, ուշքդ գնաց (Հաջի-Կարան կակազում է)

ԳԱՎԱՌԱՊԵՏ.— (Քյարամալուն) Ա դյադան, ճիշտն ասա, քեզ բաց կթողնեմ. ես մարդն ինչո՞ւ քեզ տեսավ թե չե, ուշաթափվեց:

ՔՅԱՐԱՄԱԼԻ.— Չեմ իմանում, գլխովդ պտույտ դամ:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.— Դու չե՞րք ե ո՞ւմ հետ ես զաչաղի ապրանքի գնացել:

ՔՅԱՐԱՄԱԼԻ.— Յես վոչվոքի հետ չերբեք զաչաղի ապրանքի չեմ գնացել:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.— Եդ ի՞նչ ես ասում. քեզ բեռան տակ են բռնել, ի՞նչ պես կարող ես ուրանալ:

ՔՅԱՐԱՄԱԼԻ.— Յես եդ բեռիցն ըսկի խաբար չեմ:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.— Բա ապրանքն ո՞ւմն ե:

ՔՅԱՐԱՄԱԼԻ.— Չգիտեմ:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.— Ուրեմն դու ձիով չեի՞ր:

ՔՅԱՐԱՄԱԼԻ.— Հա:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.— Հապա ձին ո՞վ եր բարձել:

ՔՅԱՐԱՄԱԼԻ.— Սատանան. յես խաբար չեմ:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.— Սիրելիս, մենք սատանային քեղանից լավ ենք ճանաչում. սատանայի ձեռիցը շատ բան է գալիս: Բայց զաչաղի ապրանքի առուստուրով չի պարապի. ճիշտն ասա, թե չե կաշիդ կքերթեմ:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Նաչալնիկ, յես մի խոսք ունեմ ասելու:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.— Ասա տեսնեմ:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Յես շատ ու շատ մեղավոր եմ. յես իմ մեղքը վիդ եմ առնում. եդ մարդուն յես իմ յերկու ընկերներին հետ հետո տարա զաչաղի ապրանք բերելու: Եդ մարդը սրա նոքսուն է. սա շատ աչքածակ մարդ է, ապրանքը վոր բռնվեց, ուշը գնաց: Հայերին ել ճանապարհին, իր ապրանքիցը վախենալով, բռնել ե:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.— (Հեյդար-բեկին) Բանը պարզվեց, դե ասա, թվքեր են ընկերներդ:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.— Ասկեր-բեկը, Սաֆար-բեկը:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.—(Մուրոյիճ) Նրանց ետեղ կանչիր:

ՄՈՒՐՈՅ.—Ես բոպելին: (Մուրոյճ մի յասաուլ և կաճուլ):

ԳԱՎԱՌԱՊԵՏ.—(Հեյգար-բեկիճ) Հապա դու ի՞նչպես չամաչեցիր, վոր
ասացիր, թե Ոհանը սուտ ե ասում:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Ոհանն իսկապես սուտ ասաց, նաչալնիկ, վորովհետև
մենք ամեն տեղ ել վեց հոգի յենք յեղել: Դաչաղի ապրանք
եյինք բերում: Չորս բեռ ունեյինք: Նրան վոր պատահեցինք,
վախեցրինք, փախցրինք ու յեկանք. գլխովդ յերզվում եմ, եյ-
լիսցի հայերին թալանելու մասին հեյ խաբար չունենք: (Յոյ ժա-
մաճակ մի յասաուլ Պսկեր-բեկիճ յեվ Սաճար-բեկիճ մոտ ե
բերում):

ԳԱՎԱՌԱՊԵՏ.—Հեյդար-բեկ, սրմնք են քո ընկերները:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Հա, դրանք են:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.—Հեյդար բեկ, թեև ավազակութան միջ դու մեղք չու-
նես, բայց քանի վոր դուք սահմանից այն կողմն անցնելով դա-
չաղի ապրանք եք բերել ու մուրոյի ուղարկած պահակների վրա
թուր ու հրացան եք քաշել, որենքով յես հիմա ձեզ ձերբակա-
լելով Ղալա պիտի տանեմ:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Կամքը քոնն ե, նաչալնիկ:

ՍՈՆԱ-ՆԱՆՈՒՄ.—(Մոտեցալով բռնում ե գաժառապեսի փեփց)
Քե մատաղ, ինձ մորթիր, դրան մի տանիր, ինձ անտեղ մի
թողնի:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.—Հեյդար-բեկ, հիվ ե սա:

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Նաչալնիկ, սա իմ կնիկն ե: Յերեկ եմ հարսանիք ա-
րել ու տունս բերել: Ես փորձանքի պատճառը սա յի:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.—Ի՞նչպես թե...

ՀԵՅԴԱՐ-ԲԵԿ.—Նաչալնիկ, յերկու տարի յի, վոր մենք մեկ-մեկու
անչափ սիրում ենք, յերկու տարի յե, վոր մենք ուղում եյինք
պսակվել: Փող չեյինք ճարում: Վերջիվերջո դաչաղի ապրանք
բերելով՝ ծախեցինք, ոգուտովը հարսանիք արինք, սրան բերի:
Յերանի թե մեռնելի, ես որը չտեսնելի:

ՍՈՆԱ-ՆԱՆՈՒՄ.—Գլխովդ պտուղտ գամ, թաղավորի գլխովը պտուղտ
արի. «վոչ ծառան առանց սխալի կլինի, վոչ ել աղան առանց
վողորմության». գրիբ ես բանը, մեծավորներին իմաց տուր.
գուցե իմ արտասուքին խնայեն: Յես իմ բերնիցը թուղթ եմ
տալիս, վոր սրանից հետո չեմ թողնի, վոր Հեյդար-բեկը վատ
գործի յետեից ընկնի:

Հէ՜՜՜ԳՍՐ-ԲԵԿ. — Նաչալնիկ, չես պատրաստ եմ Դադստանում փաղիշա-
հի թշնամիների առաջ ես մեղքն արլունովս քափելու:

ԳԱՎԱՌԱՊԵՏ. — (Մուրոյիք) Աստված ե վկա, խիղճս չի տալիս ես յեր-
կու խեղճներն իրարից բաժաննմ. տեսնես մինչև գործը բարձր
տալանին հանձնելը կարելի՞ յե սրանց չհերաշխավորությամբ ա-
զատ թողնել:

ՄՈՒՐՈՅ. Կարելի յե:

ԱՍԿԵՐ-ԲԵԿ. — Մենք ել ենք պատրաստ թշնամու հետ մեր թրերով
չափվելու:

ԳԱՎԱՌԱՊԵՏ. — (Մուրոյիք) Մինչև բարձր ատյանից պատասխան
դալը դրանց չհրաշխավորությամբ ազատ թող:

ՄՈՒՐՈՅ. — Գլխիս վրա: (Քլզ ժամանակ Հաջի-Կարայի կիճը՝ թու-
հեզը ներս մտնելով գափառապետի վոսնեքն ե ընկնում):

ԹՈՒՔԵՋ. — Գլխովդ պտույտ գամ, իմ մարդուն ել ինձ տուր:

ԳԱՎԱՌԱՊԵՏ. — (Հաջի-Կարայիք) Այ մարդ, ել զաչաղի ապրանքի հո
չե՞ս դնա:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ. — Նաչալնիկ, թորա թող լինի, թորա, թորա: Դիշեր-ցե-
րիկ քեզ համար աղոթք պիտի անեմ, վոր ինձ ես գործիցը ա-
զատեցիր:

ԳԱՎԱՌԱՊԵՏ. — Սրան ել չհրաշխավորությամբ բաց թող:

ՄՈՒՐՈՅ. — Գլխիս վրա:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ. — Գլխովդ պտույտ գամ, բա ապրանքս ի՞նչ պիտի լինի:

ԳԱՎԱՌԱՊԵՏ. — Եդ մասին համբերություն ունեցիր:

ՀԱՋԻ-ԿԱՐԱ. — Քի դուրբան, յեթե ապրանքս ինձ չհասնի, չես կմեռ-
նեմ:

ԳԱՎԱՌԱՊԵՏ. — Դու գիտես: Խալիլ չուզբաշի, Հաջի-Կարայի նոքարին
ու թողեցիներին արձակիր, թող գնան: (Քեկեքիք) Ձեր ազնվա-
կան ծագմանն ըսկի չի սաղում, վոր վատ գործերում ձեր ա-
նունը խայտառակիլիք ե կառավարության մեծավորների աչքում
վողորմելի ու խղճուկ մարդ դառնայիք: Թե գողության ե թե
զաչաղի ապրանքի գնալը կառավարության կողմից արգելված
ե: Փաղիշահի հրամանից դուրս գալն ու աստծու հրամանից
դուրս գալը մեկ ե: Աստծո հրամանից դուրս չեկողն են աշխար-
հում ե պատժվում, թագավորի հրամանից դուրս չեկողն՝ ես աշ-
խարհում: Ալլահի հրամանը կատարողին են աշխարհում զրախտն
ե բաժին ընկնում, փաղիշահի հրամանը կատարողին՝ պատիվ ու

վողորմութիւնն: Կառավարութեան պաշտօնյաները զթասիրտ են. գուցե ձեր ես հանցանքը ներեն, բայց պետք է սրանից հետո մաքուր սրտով կառավարութեան հնազանդ մնալ. ամեն վատ միտք գլխներիցդ հաննք:

ԲՈԼՈՐԸ ՄԻԱՍԻՆ.—Հոգով-սրտով քո խրատն ընդունում ենք, նա-
չալնիկ:

ԳԱՎԱՌԱՊԵՏ.—(Սոճա-խաճումի ձեռքից բռնելով) Տես, քո գեղեց-
կութեան ու արտասուքիդ հաւար Հեղար-բեկին քեզնից չբաժա-
նեցի: Նրան լավ հետեիր, վոր մինչև մեծավորներից պատաս-
խան գալը մի վատ գործ չբռնի:

ՍՈՆԱ-ԽԱՆՈՒՄ.—Գլխովդ պտույտ դամ, նաչալնիկ, միամիտ կաց:
Ինձ կսպանեմ ու չեմ թողնի, վոր նա վատ գործի յետևից ընկնի:


ԳԱՎԱՌԱՊԵՏ.—Շատ ու շատ գոհ եմ: Դո յերաշխավորականը ավելի
հուսալի չի, քան թե մի ուրիշինը: Խուզաֆիս: (Ուզում է հե-
ռացալ):


ՀԱՋԻ. ԿԱՐԱ.—Գլխովդ պտույտ դամ, նաչալնիկ. մուրցի յասաուլն
ինձ բռնելու ժամանակ ջերիցս կես արասի հանեց, հրամայիր
թող չես տա:


ԳԱՎԱՌԱՊԵՏ.—(Մուրցի) Հրամայիր, թող սրա փողը վերադարձնի:
Յեսաուլների միջիցն հո բաները պետք է արմատախիլ անել:

ՀԱՋԻ. ԿԱՐԱ.—Աւտոված քեզ յերկար կյանք ու կարողութիւն տա,
աղա, մինչև հոգիս տալը քո արած վողորմութիւնը չեմ մոռա-
նա: (Գազառապեք հեռացում է, իր մարդիկն էլ հեռեկում
են իրան):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր







(204)

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038402

A $\frac{11}{38402}$